

**Ժարգմանություն անզերենից**

Հավատարմագրման վերահաստատման թեմատիկ ուղու  
ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՄԻ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի ամերիկյան համալսարանին

Հոկտեմբերի 22-26, 2023 Վիրտուալ այց

Թիմի ցուցակը

Նախագահ՝ Ֆադյո Ռ. Խուլիի, ք.ք.թ., նախագահ  
Բեյրութի ամերիկյան համալսարան, Լիբանան

Նախագահի օգնական՝ Սեդա Խաչարյան,  
Ինստիտուցիոնալ արդյունավետության գրասենյակի պրոռեկտորի օգնական  
Պետրոսինի համալսարան, Մալիբու, Կալիֆորնիա

Թիմի անդամ՝ Աղրիանա Գալվան, բակալավրական ծրագրերի դեկան  
Կալիֆորնիայի համալսարան, Լոս Անջելես, Կալիֆորնիա

Թիմի անդամ՝ Էրին Ս. Գոր, ռեկտորի տեղակալ  
Կալիֆորնիայի համալսարան Սան Ֆրանցիսկո  
Սան Ֆրանցիսկո, Կալիֆորնիա

Թիմի անդամ՝ Սեսիլ Լինդսի, պորտենորի տեղակալ  
և Մագիստրատուրային դեկան, թոշակի անցած  
Կալիֆորնիայի պետական համալսարան, Լոնգ Բիչ, Կալիֆորնիա

ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ հանձնաժողովի կապող օդակ՝ Բարբարա Գրոս Դևիս, փոխնախագահ  
ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ ավագ քողեջի և համալսարանի հանձնաժողով

Թիմը գնահատել է հաստատությունը 2013 թվականի հավատարմագրման ստանդարտներով և  
պատրաստել սույն զեկույցը, որը պարունակում է որա հավաքական գնահատականը՝  
հաստատության և ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ ավագ քողեջի և համալսարանական հանձնաժողովի  
(ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ հանձնաժողով) կողմից քննարկման և գործողությունների նպատակով:  
Հաստատության կարգավիճակի վերաբերյալ պաշտոնական գործողությունները կատարվում են  
Հանձնաժողովի կողմից և նկարագրված է Հանձնաժողովի հաստատությանն ուղղված  
նամակում: Այս զեկույցը և Հանձնաժողովի նամակը հասանելի է հանրությանը ԴԲԱԸ ԲՈՒՀ-ԵՐԻ  
հանձնաժողովի կայքում:

|  |    |
|--|----|
| <b>ԲԱԺԻՆ I – ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍ</b>  | 3  |
| 1. IA. Հաստատության և հավատարմագրման պատմության նկարագրությունը  | 3  |
| 2. IB. Թիմի վերանայման գործընթացի նկարագրությունը  | 4  |
| 3. IC. Հաստատության վերահաստատման գեկույց և թարմացում.   |    |
| Չեկույցի որակը և ճշգրտությունը և հաստատող ապացույցներ  | 6  |
| <b>ԲԱԺԻՆ II – ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԷՍԵՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b>  | 7  |
| 1. Հաստատության ֆինանսական դիրքի և կարողությունների ամրապնդում   | 7  |
| 2) Դասախոսական կազմի գիտական աշխատությունների քաղաքականության իրականացման շարունակում  | 8  |
| 3) Բազմագանության խթանում  |    |
| 4) Ծրագրի վերանայման, պլանավորման և ռեսուրսների բաշխման համապատասխանեցում  | 11 |
| <b>II.B. Մաս 2. Համապատասխանություն. Վերանայում ըստ ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի ստանդարտների և համապատասխանություն դաշնային պահանջներին</b> | 12 |
| - Ստանդարտ 1. Ինստիտուցիոնալ նպատակների սահմանում  |    |
| և կրթական նպատակների ապահովում   | 12 |
| - Ստանդարտ 2. Կրթական նպատակների ձեռքբերում հիմնական գործառույթների միջոցով  | 15 |
| - Ստանդարտ 3. Ռեսուրսների և կազմակերպչական կառույցների մշակում և կիրառում որակի և կայունության ապահովման համար                             | 17 |
| - Ստանդարտ 4. Որակի ապահովմանը, ինստիտուցիոնալ ուսուցմանը և կատարելագործմանը ձգողող կազմակերպության ստեղծում                               | 19 |
| <b>II.C. Մաս 8. Հաստատության հատուկ թեմաները</b>   | 23 |
| - Թեմա առաջին՝ բակալավրիատի ամբողջականությունը   | 23 |
| - Թեմա երկրորդ. Ուսումնական ծրագրի վերանայում  | 29 |
| <b>II.D. Մաս 9. Վերլուծություն և բարեկավման պլաններ</b>  | 32 |
| <b>ԲԱԺԻՆ III – ԱՅԼ ԹԵՇԱՆԵՐ (օրինակ՝ Էական փոփոխություն)</b>  | 34 |
| - Առևա չեն   | 34 |
| <b>ԲԱԺԻՆ IV – ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՈՎԱԾԱՆՔՆԵՐ</b>   | 37 |
| <b>ԵՎ ԳՈՎԱԾԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>   |    |
| A. Դաշնային համապատասխանության ձևեր  | 37 |
| B. Համալսարանից դուրս գտնվող վայրերի ակնարկ  | 45 |
| C. Հեռավար կրթության վերանայում  | 49 |

## **ԲԱԺԻՆ I – ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍ**

### **I. 1A. Հաստատության և հավատարմագրման պատմության նկարագրությունը**

Հայաստանի Ամերիկյան Համալսարանը (ՀԱՀ) ստեղծվել է 1991թ. սեպտեմբերին՝ Հայաստանում բարձրագույն կրթության ամերիկյան մոդելը ներդնելու կոնկրետ նպատակով՝ դանալով առաջին ԱՄՆ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունը տարածաշրջանում։ Ունենալով Հայաստանի կառավարության աջակցությունը՝ համալսարանը պետք է իր տեղը գտներ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում որպես առաջին մասնավոր համալսարան։ ՀԱՀ-ի առաքելությունն է «ազդեցություն ունենալ ուսանողների և համայնքի վրա՝ որպես ակադեմիական գերազանցության, նորարարության, ուսումնասիրության և բազմազանության կենտրոն, որը նպաստում է Հայաստանի, տարածաշրջանի և աշխարհի հետագա զարգացմանը և առաջընթացին՝ ուսուցման և գիտության միջոցով, խթանելով ստեղծարար հմտությունները, ամբողջականությունը և հանրօգուտ աշխատանքը»։ Հիմնադրումից ի վեր ՀԱՀ-ը մեծ աճ է գրանցել՝ բազմազանացնելով իր ակադեմիական առաջարկները, ընդլայնելով հանրային իրազեկումը, ուղղելով համալսարանի ընթացքը դեպի շարունակական աճ և գերազանցություն։ ՀԱՀ-ը Հայաստան բերեց ԱՄՆ-ի առաջին մագիստրոսական կոչումները և նպաստեց ուսանողակենտրոն ուսուցմանը։ Ի սկզբանե ՀԱՀ-ն իր դռները բացել է 1991 թվականին Երևանում որպես բարձրագույն հաստատություն, որն առաջարկել է մագիստրոսի աստիճաններ հատուկ ընտրված՝ տեղական բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջարկվող ծրագրերը լրացնելու և ոչ կրկնօրինակելու համար։ Այնուամենայնիվ, այդ ուսումնավարությունը փոփոխության է ենթարկվել Հայաստանի և տարածաշրջանի փոխվելուն համընթաց։ Այս ընթացքում Հայաստանի կառավարությունն ընդունել է եռաստիճան բարձրագույն կրթության համակարգ, և պետական բուհերն առաջարկում են բակալավրի, մագիստրոսի և դոկտորական աստիճաններ՝ նախկին երկաստիճան համակարգի փոխարեն։ Հայաստանի կառավարությունը նաև ներգրավվել է Եվրոպական Միության Բոլոնիայի գործընթացին և շարունակում է բարեփոխել համալսարանական կրթությունը՝ Եվրոպական կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխանելու համար։ Այս զարգացումներին գուգահեռ Հայաստանի և տարածաշրջանի այլ բուհերը սկսեցին առաջարկել գիտական աստիճաններ, որոնք առաջարկվում էին միայն ՀԱՀ-ում։ ՀԱՀ-ն ունի նաև հաստատված համալսարանական տարածք Դիլիջանում, որը ներկայումս հյուրներում է Տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ամբողջական ավարտական ծրագիրը՝ ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) հետ համագործակցությամբ և աջակցությամբ։ ՀԱՀ-ը չունի հեռավար կրթության որևէ ծրագիր։

### Էջ 3 54-ից

ՀԱՀ-ի դասախոսական կազմը կենտրոնացած է չորս քոլեջներում՝ 11 մագիստրոսական և ութ բակալավրական ծրագրերով, այդ թվում՝ մեկ բակալավրական և երկու մագիստրոսական ծրագրերը, որոնք մեկնարկել են 2023 թվականի աշնանը, և յոթ ավարտական սերտիֆիկացում։ 2009 թվականին մարտ-հոկտեմբեր ուսումնական օրացույցիցի անցումը դեպի ավելի ստանդարտ սեպտեմբեր-հունիս ուսումնական օրացույցը, ՀԱՀ-ի կրթական որակի աճող համբավը, շրջանավարտների ցանցը, ակտիվ հավաքագրման ջանքերը և ուսանողներին ցուցաբերվող ֆինանսական աջակցության շարունակական հանձնառությունը ՀԱՀ-ը գրավիչ է դարձել ուսանողների համար։ 1991 թվականի սեպտեմբերին ՀԱՀ-ն ընդունել է 101 ուսանող, բոլորը մագիստրոսներ։ 2022 թվականի աշնանը ՀԱՀ-ն ընդունել է 2247 ուսանող, 1811 բակալավրական ծրագրի ուսանողներ և 436 մագիստրոսներ։ Ուսանողների թվի աճը հիմնականում պայմանավորված է բակալավրիատի ծրագրի առաջարկներով, որոնք սկսվել են 2013 թվականին։ ՀԱՀ-ը ստորագրել է շուրջ 20 փոխըմբռնման հուշագիր (MOU) միջազգային բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավոր հատվածի և պետական հատվածի գործընկերների հետ։ ՀԱՀ-ը նախաձեռնել է ԴԲԱՀ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի հավատարմագրման գործընթացը 1998թ.-ին։ Համալսարանը ստացել է թեկնածուի կարգավիճակ 2002 թվականին և ստացել նախնական հավատարմագրում 2006 թվականի օգոստոսին, այդ ժամանակ ՀԱՀ-ը եղել է բարձրագույն ուսումնական հաստատություն։ 2015 թվականի մարտին ՀԱՀ-ի հավատարմագրումը վերահաստատվել է ինը տարով մինչև 2024թ. փետրվար ամիսը։ 2011թ.-ին ՀԱՀ-ը նախաձեռնեց Կառուցվածքային փոփոխությունների գործընթաց՝ բակալավրիատի ուսուցումն սկսելու համար։ Իսկ 2012 թվականի մայիսին ՀԱՀ-ին տրվեց թույլտվություն՝ 2013 թվականի աշնանից բակալավրական ծրագիր սկսելու համար։ Հիամալսարանը դիմել է և մի քանի նոր ծրագրերի հավանություն է ստացել՝ բակալավրի աստիճան՝ Բիզնես, Համակարգչային գիտություն (նախկինում՝ Հաշվողական գիտություններ), Անգլերեն և հայորդակցություն (2012), Ճարտարագիտություն գիտություններ (2017), Տվյալների գիտություն (2017), Քաղաքականություն և Կառավարում (2020), Քույրական գործ (2022), Բնապահպանական և Կայունության գիտություններ (2022) մասնագիտություններով, և մագիստրոսի աստիճան Տնտեսագիտություն (2012), Ուսումնական կառավարում (այժմ՝ կառավարում) (2017), Մարդու իրավունքներ և սոցիալական արդարություն (2020), Միջազգային հարաբերություններ և Դիվանագիտություն (2022) և Հասարակայնության հետ կապեր (2022) մասնագիտություններով։

#### 2. IV. Թիմի վերանայման գործընթացի նկարագրությունը

2023 թվականի մայիսին թիմի անդամները կողմնորոշիչ հանդիպում ունեցան ԴԲԱՀ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի կապող օղակի հետ և տեղի ունեցավ կարծիքների փոխանակում այցի արդյունքների վերաբերյալ։ 2023 թվականի հունիսի 26-ին թիմը և ԴԲԱՀ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի կապող օղակը վիրտուալ հանդիպում ունեցան ՀԱՀ-ի երկու խորհուրդներից մեկի հետ տեղեկատվական և օգտակար գրույցի նպատակով։

### Էջ 4 54-ից

2023 թվականի օգոստոսին ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովը հրավիրեց թիմի անդամներին ինքնուրույն ուսումնասիրել և վերանայել ՀԱՀ-ի ինստիտուցիոնալ գեկույցը և դրան կից հաստատության կողմից տրամադրված փաստաթղթերը: Թիմի անդամները լրացրեցին աշխատանքային թերթիկները՝ մանրամասն տեղեկատվություն ամփոփելու համար՝ նշելով առաջատար փորձի ուժեղ կողմերն ու ոլորտները, բարեկավման թույլ կողմերն ու ոլորտները և ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի բաղադրիչների վերաբերյալ հետագա հարցման հատուկ հարցերը, թեմատիկ ոլորտները և հավատարմագրման ստանդարտները: Ստեղծվեց գաղտնի է.փոստ՝ Համալսարանական համայնքի ավելի մեծ մասնակցությունն ապահովելու և ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար: Գաղտնի էլեկտրոնային փոստը վերահսկվում էր նախազահի օգնականի կողմից: Նախազահը առանձին գրույց ունեցավ ՀԱՀ-ի նոր նախազահի հետ՝ նախրան հավատարմագրման այցը: Նախազահը կատարեց նաև հայց համալսարանական քաղաքը հեռակա կարգով: Վիրտուալ հարցազրույցները տեղի են ունեցել 2023 թվականի հոկտեմբերի 20-ին, որի ընթացքում նախազահը հանդիպում է ունեցել է դեկանի հետ՝ ծրագրի տնօրեն՝ Տնտեսագիտության մագիստրոսի (MSE) ծրագրի Փակուլտետ, ուսանողների և ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) դեկավարի օգնականի հետ: Հարցազրույցների ընթացքում նախազահը հայցել է տեղեկություն, որը կիաստատեր համալսարանական քաղաքի մագիստրոսական ծրագրի և ուսանողական ծառայությունների և հարմարությունների համադրելիությունը գլխավոր համալսարանի որակի հետ: Հուսադրող էր տեսնել, որ ուսանողները Դիլիջանում զգացին, որ ձեռք բերվող ռեսուրսներն ու փորձը արդարացնում էին իրենց մասնակցությունը ՀԱՀ-ի հետդիպումային այլ ծրագրերում ընդգրկվելը: Այնուհետև նախազահը դիտեց համալսարանական քաղաքի կայքի գեկույցը, որը գտնվում է սույն գեկույցի հավելվածում: Մեկ այլ անդամ իրականացրել է հեռավար կրթության ծրագրերի վերանայում: Չնայած ՀԱՀ-ը չի առաջարկում որևէ հեռավար կրթական աստիճանի ծրագիր, COVID19 համաճարակի ժամանակ ՀԱՀ-ն անցել է առցանց դասընթացների և շարունակում է առաջարկել որոշ հեռավար դասընթացներ կամ դասընթացների մասեր մինչև 2023 թվականի գարուն: Ծրագրերից կամ դասընթացներից ոչ մեկը նախատեսված չեն հեռավար ուսուցման համար: ՀԱՀ-ը երբեմն առաջարկում է դասընթացներ առցանց՝ համաժամանակային սկզբունքով, հատկապես, երբ դասախոսական կազմի անդամները տարբեր երկրներից են և տեղակայված են Հայաստանից դուրս: Այս դասընթացներն անցկացվում են Zoom-ով: ՀԱՀ-ի կողմից հեռավար ուսուցման կիրառումը նկարագրված է հավելվածի գեկույցում: Մինթեզվել են թիմի աշխատանքային թերթերը և հանդիպման գրառումները և միասին վերանայվել են 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած այցին նախորդող թիմային զանգի ժամանակ:

## Էջ 5 54-ից

ՀԱՀ-ի հավատարմագրման կապող օղակը (ALO) նախապատրաստել էր թիմի ժամանակացույցի նախագիծը՝ նախքան այցը: Սակայն աշխարհաբառական անկարգությունների պատճառով վերահաստատման այցը փոխարինվեց հեռավար վերանայմամբ՝ չորս ժամային գոտիներում: Ծարքը օրը՝ 2023 թվականի հոկտեմբերի 21-ին թիմը սկսեց հեռավար այցը կատարողական պլանավորման նիստով, որի ընթացքում թիմը վերանայեց այցերի վերջնական ժամանակացույցը, պարզեց հարցման կոնկրետ ուղղությունները յուրաքանչյուր անհատի և խմբի հետ հանդիպման ընթացքում, ինչեւ նաև թիմի բոլոր անդամներին փոխանցվեց գաղտնի է.փոստի բովանդակությունը: Հոկտեմբերի 21-26 շաբաթվա ընթացքում թիմը Zoom-ի միջոցով հանդիպեց ՀԱՀ-ի բազմաթիվ անդամների, այդ թվում՝ համալսարանի դեկանական պատրիարքի, համալսարանական քաղաքի ադմինիստրատորների, դասախոսական կազմի, անձնակազմի, ուսանողների՝ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրոսական ծրագրերի, ինչպես նաև ՀԱՀ-ի տնօրենների խորհրդի հետ: Թիմը տեղեկացավ հաստատության, որա կազմակերպչական կառուցվածքի, ընդհանուր կառավարման, ուսումնամեթոդական խորհրդի, ուսանողների աջակցության ծառայությունների, ծրագրերի վերանայման, Փակուլտետի ուսումնական գործընթացների, Փինանսական կարգավիճակի, ընդլայնման պլանների և ուսումնական պլանավորուման մասին: Այցն ավարտվեց հինգշաբթի օրը՝ 26 հոկտեմբերի 2023թ. նախագահի և ՀԱՀ նախագահի առանձնազրույցով, որին հաջորդեց արտագնա նիստը, որի ընթացքում հնչեցին ՀԱՀ համայնքին վերջնական գովասանքները և առաջարկությունները Zoom-ով՝ թիմի բոլոր անդամների առցանց ներկայությամբ: Թիմը տեսնում է այն ծավալուն աշխատանքը, որը ALO-ն և հաստատությունը ներդրել են գեկույցում և լրացուցիչ փաստաթղթերի անհրաժեշտությանը արձագանքելիս, ինչպես նաև վերջին պահին ժամանակացույցի հիմնական փոփոխությունների կատարումը, երբ այցը փոխվեց անձնական այցից հեռավարի: Թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի ամերիկյան համալսարանին արագորեն անխափան հեռահար այց ապահովելու համար՝ հաշվի առնելով տարածաշրջանային անկայունությունը և այլ չնախատեսված փոփոխությունները:

### 3. IC. Հաստատության վերահաստատման գեկույց և թարմացում. Հաշվետվության որակը և ճշգրտությունը և հաստատող ապացույցներ

Թիմը բարձր է գնահատում Հայաստանի ամերիկյան համալսարանի լավ կազմակերպված, մանրակրկիտ և մտածված ինստիտուցիոնալ գեկույցը: ՀԱՀ-ի գեկույցում նաև նշվեցին համալսարանի հաղթահարած մարտահրավերները COVID19 համաճարակի ժամանակ, ինչպես նաև Արցախում (Լեռնային Ղարաբաղ) մի քանի պատերազմների

## Էջ 6 54-ից

հետևանքով առաջացած քաղաքական հուզումները և դրա ազդեցությունը ուսանողների և համայնքի վրա ընդհանուր առմամբ: ՀԱՀ-ն ընտրել է երկու թեմա՝ վերահստատման թեմատիկ ուղու (TPR) համար՝ 1) Բակալավրիատի աստիճանի ամբողջականություն և 2) ուսումնական ծրագրի վերանայում: Հաստատության կողմից իր թեմաների ուսումնամասիրությունը արդյունավետ արդյունքներ ունեցավ, որոնք, ըստ Համայստրանի, նպաստում են իր ուսումնական ծրագրերի վերանայումների շարունակական զարգացմանը և բակալավրիատի որակին: Թիմի համար ակնհայտ էր, որ զգայի ժամանակ և էներգիա էր ներդրվել տվյալների հավաքագրման, վերլուծության և եզրակացությունների ընկալմանը, ինստիտուցիոնալ գեկույցի արդյունքների ամփոփման պատրաստմանը և էական հաստատող փաստաթղթերի համադրաման գործում: Զեկույցում մանրամասնորեն դիտարկվում են ՀԱՀ-ի ապագա ծրագրերը և առաքելությանը դրա համապատասխանությունը: Թիմը նկատել է, որ ուսանողի կարծիքը հաշվի է առնվում ծրագրի վերանայման և ուսանողների ծառայությունների գնահատման ժամանակ և կիրառվում է շարունակական բարելավման նպատակով: Ծրագրի նախագահներին տրվում է ազատ ժամանակ ուսումնական ծրագրի վերանայման համար:

## ԲԱԺԻՆ Պ -ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԷՍԵՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### IIA. Բաղադրիչ 1. Արձագանք Հանձնաժողովի նախորդ գործողություններին

Ինստիտուցիոնալ գեկույցը վերաբերում էր 2015թ. ԴԲԱՀ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի Գործողությունների նամակին՝ որտեղ նշվում էին հաստատության կողմից հետագա հատկացվող ուշադրության և զարգացման չորս ոլորտներ՝ 1) Հաստատության ֆինանսական վիճակի ու կարողության հզորացում, 2) Կրթաթոշակային բաղաքանության իրականացման շարունակելիություն 3). Բազմազանության ընդացնում և 4) Ծրագրի վերանայման, պլանավորման և ռեսուրսների բաշխման համապատասխանեցում: Ինստիտուցիոնալ գեկույցում մանրամասնորեն են համալսարանի ջանքերը բոլոր չորս ոլորտներում: Թիմի կողմից գեկույցի և հարակից փաստաթղթերի վերանայումը, ինչպես նաև այցելությունների ժամանակ հարցագրույցները հաստատում են նախորդ հանձնաժողովի գործողությունների հետևյալ պատասխանները՝

#### 1. Հաստատության ֆինանսական դիրքի և կարողությունների ամրապնդում

Վերջին վերանայումից ի վեր ՀԱՀ-ը շարունակել է կենտրոնանալ իր ֆինանսական կարգավիճակի ամրապնդման վրա՝ ավելացնելով դրամահավաքը բազմաթիվ ոլորտներում, վերահսկելով ծախսերը, կենտրոնանալով նվիրատվության ֆոնդի աճի վրա՝ թե՛ ԱՍՆ դոլարով, թե՛ հայկական դրամով, ինչպես նաև արձանագրելով շարունակական հաջողություններ հաստատությունների համար արտաքին դրամաշնորհներ ստանալու գործում: Դրամահավաքի աճը տեղի է ունեցել կրթաթոշակների, հաստատությունների, նվիրատվության ֆոնդի ոլորտում և, թեև տարեկան նվիրատվությունները շարունակվում են,

դրանց նշանակալիությունը եկամուտների հոսքում նվազել է: 2013 թվականին մեկնարկած 100 պուն (The 100 pillars) ծրագիրը ապահովել է 100 դոնոր, ովքեր հինգ տարվա ընթացքում նվիրաբերել են 50,000 դոլար: Այս արշավը հավաքել է 5 մլն դոլար անսահմանափակ միջոցների ի աջակցություն համալսարանի գործառնական բյուջեի: Վերջերս համալսարանը մեկնարկեց հաջորդ ծրագիրը՝ ներգրավելու 200 անհատների՝ հինգ տարվա ընթացքում տարեկան 5000 դոլար նվիրաբերելու համար: Ներկայումս հավաքագրվել է 1,2 մլն դոլար միջին, և ակնկալվում է, որ այդ թիվը կհասնի իր նպատակին մինչև 2026 թվականի վերջը: 2023 թվականին ՀԱՀ-ը ստացել է համալսարանի պատմության մեջ ամենախոչը նվիրատվության խոստումը՝ 20 մլն դոլար, հումանիտար և հասարակական գիտությունների և արվեստի շենքերի կառուցման նպատակով: Եվս 10 մլն դոլար խոստացվել է գիտական և ճարտարագիտական շենքի համար: Վերջին յոթ տարիների ընթացքում համալսարանը գործել է հետևողականորեն հավասարակշռված բյուջեի շրջանակներում, ինչը հատկապես ուշագրավ է՝ հաշվի առնելով տեղական արժույթի կտրուկ աճը ԱՄՆ դոլարի նկատմամբ (25% աճ վերջին 1,5 տարվա ընթացքում), ինչն առաջացրեց գնաճային մարտահրավերներ: Ի պատասխան՝ համալսարանը պահպանել է տարեկան հավասարակշռված բյուջեն ավելի շատ նվիրատվություններ հատկացնելով տարեկան բյուջեին, այլ ոչ թե հիմնադրամին: Այս գործառնական բյուջեի շրջանակներում ակնկալվում է, որ վճարումները հիմնադրամին կապահովեն 2024թ. Փինանսական տարվա գործառնական բյուջեի մոտավորապես 19%-ը՝ 2013թ. Փինանսական տարվա 8%-ի դիմաց: Ակնկալվում է, որ ուսման վարձավճարները կծածկեն 2024թ. Փինանսական տարվա ընդհանուր գործառնական բյուջեի մոտ 41%-ը՝ 2013թ. Փինանսական տարվա 13%-ի դիմաց, մինչդեռ բյուջեն ինքնին աճել է 6 մլն դոլարից մինչև 19 մլն դոլար նույն ժամանակահատվածում: Այս տարատեսակ եկամուտների աղբյուրների աճը նվազեցրել է գործառնական բյուջեի կախվածությունը դրամահավաքից՝ ինի արդյունքում ունենք Փինանսապես ավելի կայուն հաստատություն: Համալսարանի Փինանսական դիրքի ամրապնդման հաջորդ ուշադրության արժանի հիմքը համալսարանի նվիրատվության ֆոնդի շուկայական արժեքի վեցապատիկ աճն է, մոտավորապես 100 մլն ԱՄՆ դոլարով, որը մասնագիտորեն կառավարվում է Կայիփորնիայի համալսարանի կողմից և ևս 20 միջին ԱՄՆ դոլարով, սակայն կառավարվում է Հայկական բարեգործական ընդհանուր միության (AGBU) համալսարանը հիմնադրող հաստատության կողմից:

## 2) Դասախոսական կազմի գիտական աշխատանքների քաղաքականության ներդրման շարունակում

2015 թվականի Կրթական արդյունավետության ստուգումից հետո համալսարանը վերանայեց դասախոսների նշանակման, պահպանման, առաջիսաղացման և կոչումների տրման քաղաքականությունը և ընդունեց համապատասխան առաջիսաղացման ընթացակարգեր: Քաղաքականությունը նախանշում է համալսարանի գիտական աշխատանքների սահմանումը, որը հիմնված է Բոյերի մոդելի վրա: Ֆակուլտետի խորհրդի և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված առաջիսաղացման ընթացակարգերը ներառում են ինքնազեկուցում և գործընկերների գնահատում դասավանդման, գիտության և համալսարանի, ինչպես նաև մասնագիտական և հանրային ծառայության յուրաքանչյուր ոլորտում: Պրոֆեսորադասախոսական կազմի բաց հանդիպման ժամանակ անդամներին առաջարկվեց վերանայել վերջին ութ տարիների ընթացքում գործող առաջիսաղացման քաղաքականությունը՝ հետազոտված սահմանելու այն չափանիշները, որոնք օգտագործվում են ֆակուլտետի անդամների հետազոտության արդյունքների և դասավանդման արդյունավետության գնահատման համար, քանի որ ՀԱՀ-ը ձգտում է ավելի շատ գրադվել հետազոտությամբ: 2015թ.-ին, հետազոտությունը խթանելու նպատակով, համալսարանը սկսեց շնորհել դասախոսական կազմի ամենամյա մրցանակներ հետազոտությունների ոլորտում, ինչպես նաև դրամաշնորհներ դասախոսների և անձնակազմի մասնագիտական զարգացման, հետազոտության և դասավանդման համար: Ֆակուլտետի ծանրաբենվածության քաղաքականությունը, որը թարմացվել է 2017 թվականին և ներկայումս վերանայման փուլում է, ներառում է հետազոտությունների և կրթաթոշակների վրա ծախսված ժամանակի գնահատում, մինչդեռ դասախոսների գնահատման ընթացակարգերը պահանջում են, որ դասախոսները շեշտը դնեն հետազոտությունների և գիտության վրա:

## 3) Բազմազանության խթանում

Հայաստանը միատարր երկիր է, որտեղ 98%-ը էթնիկ հայեր են. այսպիսով համալսարանը ընդունում և ձգտում է գեներացին, տարածաշրջանային և սոցիալ-տնտեսական բազմազանության: Ներկայումս, ՀԱՀ ուսանողների ընդգրկվածությունը կազմում է 37% տղամարդ և 63% կին; և մոտավորապես 8%-ը օտարերկրացի են, Հայաստանի ուսանողների 73%-ը Երևանից են, իսկ 27%-ը՝ Երևանից դուրս գտնվող մարզերից: Հաստատության կողմից ընդգրկված Pell ստացողների համարժեքը 50% է: Թե՛ օտարերկրյա, թե՛ տարածաշրջանային ուսանողների ընդունելության բազմազանությունը, եղել է համալրման ակտիվ ջանքերի կիզակետում մինչ COVID-19 համաճարակը ամբողջ աշխարհում: Վերջին երկու տարիներին ՀԱՀ-ը վերադարձել է օտարերկրյա ուսանողների ընդունելության, ինչպես նաև ջանքեր է գործադրում մայրաքաղաք Երևանից դուրս սահմաններում, որտեղ ապրում է երկրի բնակչության մոտավորապես կեսը: 2022 թվականի աշնանը, ավելի քան 20 երկրներից օտարերկրյա ուսանողները կազմում էին ուսանողների ընդգրկվածության 8%-ը, ինչն առաջընթաց է նախորդ տարիների համեմատ, մինչդեռ ՀԱՀ

20% նպատակային ցուցանիշից դեռևս ցածր է: ՀԱՀ-ն օտարերկրյա ուսանողներին առաջարկում է վաստակի վրա հիմնված կրթաթոշակներ: ՀԱՀ-ի դասախոսական կազմը բազմազան է՝ Հունաստանից, ԱՄՆ-ից, Լիբանանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Կանադայից, Բուլղարիայից, Իրանից, Չիլիից և այլ երկրներ: ՀԱՀ-ը մի քանի նախաձեռնություններ է իրականացնում Համալսարանական քաղաքի ընդլայնման և բազմազանեցման համար: Մի շարք փոխմբունման հուշագրեր (MOU) են ստորագրվել Միացյալ Նահանգների և Եվրոպայի համալսարանների հետ՝ խթանելով ուսանողների, դասախոսների և անձնակազմի փոխանակումը: Ծառայությունների առումով Համալսարանական քաղաքը հասանելի է հաշմանդամություն ունեցող ֆիզիկական անձանց համար: Համալսարանի մատչելիությունը ընդգծվել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից աջակցվող գեկույցում որպես Հայաստանում ուսումնասիրված բարձրագույն հաստատություններից միակը, ունի ֆիզիկապես մատչելի համալսարանական քաղաք և որը մշակել է ուսանողների հաշմանդամության քաղաքականություն: Քաղաքականությունը համապատասխանում է ՀԱՀ-ի պարտավորությանը՝ լինել բաց ուսման որակավորում ունեցող բոլոր դիմորդների համար՝ անկախ ռասայից, կրոնական դավանանքից, գույնից, ազգային պատկանելությունից, ծագումից, ֆիզիկական հաշմանդամությունից, մտավոր հաշմանդամությունից, բժշկական վիճակից, ամուսնական կարգավիճակից, սեռից, տարիքից կամ սեռական կողմնորոշումից: Համալսարանը տրամադրում է ծառայություններ և ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող ուսանողներին աջակցելու համար: Համալսարանի ուսանողական հարցերի գրասենյակը տրամադրում է խորհրդատվություն, հաշմանդամության ծառայություններ, կացարաններ և կազմակերպում է սեմինարներ և բննարկումներ՝ ինտեգրումն ու հանդուժողականությունը խթանելու և խրախուսելու համար: Թեև Բազմազանությունը, հավասարությունը և ներառումը /DEI/ թեմատիկ մոտեցման ընտրված թեման չէ, ՀԱՀ-ը ժամանակ է հատկացրել դրա շուրջ մտորման համար, հատկապես հաշվի առնելով ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի նոր չափանիշները: ՀԱՀ-ի պլաններում է վերջնական տեսքի բերել և ընդունել ՀԱՀ-ի DEI սահմանումը, ինչպես նաև զարգացնել ուսուցման մոդուլներ դասախոսների և անձնակազմի DEI-ի վերաբերյալ թեմաներով զարգացման համար: ՀԱՀ-ը առաջարկել է իր Ակադեմիական ծրագրի վերանայման գործընթացում ներառել մանդատ՝ ցույց տալու, թե ինչպես է ծրագիրը մարմնավորում DEI-ն ուսումնական ծրագրի շրջանակներում, և ուսանողներին, դասախոսներին և անձնակազմին տրամադրվող աջակցությունը: ՀԱՀ-ը գնահատում է իր DEI ուժեղ կողմերը և բարեկավման ոլորտները, ներառյալ դրա բազմազանության սահմանման ուսումնասիրությունը, առկա տվյալների վերլուծությունը և ավելի մեծ ուշադրություն պահանջող ոլորտների վերհանումը: Իրենց աջակցության ծառայությունների, հարմարությունների և այլ ասպեկտների սեփական հետազոտության և հաշվառման ընթացքում պարզվեց, որ ՀԱՀ-ի ուժեղ կողմերը DEI-ում ներառում են ֆիզիկական մատչելիությունը, ուսանողների ծառայություններում հավասարությունը, հարաբերական բազմազանությունը և լսարանում DEI-ն խթանելու

ներուժը: Բարեկավման ոլորտները ներառում էին փոխգործակցությունը և որոշումների կայացումը, հավասարության ընկալումները՝ ներառյալ աշխատավարձի և առաջխաղացման չափանիշները, մատչելիության խոչընդոտները և քաղաքականության ներդնումը: <ԱՀ-ի ուսումնական ծրագրերի իննսունիինգ տոկոսն ունի առնվազն մեկ ուսանողի կրթական վերջնարդյունք՝ կապված DEI-ի հետ: Բակալավրիատի ծրագրերը ներառում են DEI-ի հետ կապված երկու կոնկրետ ուսանողական կրթական վերջնարդյունք: Ինստիտուցիոնալ գեկույցում նշվում է նաև DEI աշխատանքային խումբը, որը հանդիպել է, վերլուծել է հարցումները և գոյություն ունեցող քաղաքականությունը, այնուհետև մշակել է քաղմազանության, հավասարության և ներառման սահմանումների նախագծեր՝ հետագա քննարկման, վերանայման և համալսարանական քաղաքի կողմից ընդունման համար: Սահմանումները վերանայվել են Հավատարմագրման համակարգման կողմիտեի կողմից և կվերանայվեն գալիք ուսումնական տարում: Հարցագրույցների ժամանակ համալսարանի քաղմաթիվ անդամներ նշել են, որ անհրաժեշտ է ունենալ DEI անկախ գրասենյակ և ներգրավել լրիվ դրույքով Title IX աշխատող՝ DEI-ի նախաձեռնությունները հաստատության բոլոր գործառույթներում խթանելու և օրինական կարգավիճակ տալու համար: Ելնելով DEI-ի նկատմամբ <ԱՀ-ի հայտարարած պարտավորությունից թիմը առաջարկում է, որ <ԱՀ-ը շարունակի ջանքերը. ա) վերջնական տեսքի բերելու և ընդունելու DEI-ի սամանումները, որոնք ներառում են տարբեր հետազոտություններում, բ) նշանակելու DEI-ի պաշտոնյա և զ) մշակելու վերապատրաստման մոդուլ(ներ), որոնք կընդգրկեն ոտնձգությունները, խորականությունը, անհարգայից վարքագիծը և դասախոսական կազմի, անձնակազմի և ուսանողների գեկույցների ընթացակարգերը:

#### 4) Ծրագրի վերանայման, պյանավորման և ուսուրսների բաշխման համապատասխանեցում

2015թ.-ի կրթական արդյունավետության վերանայումից և համալսարանի ուսումնավարական ծրագրերի ընդունումից հետո <ԱՀ-ն սկսեց ավելի լավ համապատասխանեցնել իր բյուջետավորման գործընթացը գնահատման ջանքերին՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսների ճիշտ հատկացման վերաբերյալ: Համալսարանը ժամանակ է հատկացրել ծրագրերի վերանայումն իրականացնող նախագահներին և, ըստ պահանջի, հատկացրել է վարչական անձնակազմի ռեսուրսները, բացի <ամալսարանի ինստիտուցիոնալ հետազոտությունների և գնահատման գրասենյակի (OIRA) կողմից նախատեսվածները: Ճշգրտվել է բյուջեի գործընթացի ժամանակացույցը՝ համալսարանի ընդհանուր պյանավորմանը ավելի լավ համապատասխանելու և ծրագրի վերանայման առաջարկությունները քնարկելու նպատակով: Ուսումնական ծրագրերի վերանայման (APR) ռեկույցները պահանջում են, որ ծրագիրը հաշվի առնի ռեսուրսների բաշխումը և լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը, որն ակնկալվում է, որ կարտացոյվի առաջարկող ակադեմիական ծրագրերի բյուջեներում:

Զնայած այս սկզբնական քայլերին, և որպես TPR հիմնական քաղադրիչ, ավելի մեծ ուշադրություն է պահանջվում այդ գործընթացները պարզեցնելու և ավելի լավ համապատասխանեցնելու համար: ՀԱՀ-ը 2018 թվականի սեպտեմբերի 7-ին ներկայացրել է բակալավրական ծրագրի շուրջ աշխատանքի առաջընթացի գեկույցը՝ համաձայն հանձնաժողովի 2015 թվականի մարտի 6-ի գրության:

Թիմը եկավ եզրակացության, որ ՀԱՀ-ը բավարարում է վերջին վերանայման պահանջները, սակայն որոշ ոլորտներում լրացուցիչ աշխատանք է անհրաժեշտ՝ համաձայն ինստիտուցիոնալ գեկույցի և հաստատված հարցազրույցներով: Երկու դեպքում էլ բացահայտվեց ավելի շատ աշխատանքի անհրաժեշտությունը՝ ծրագրերի վերանայումը, զնահատումը, ուսուրսների բաշխումը և պլանավորումը համապատասխանեցնելու և ներդաշնակեցնելու համար: ՀԱՀ-ին խրախուսվում է շարունակել այս գործընթացների հստակեցումը:

## **II.B. Մաս 2. Համապատասխանություն. Վերանայում ըստ ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի ստանդարտների և համապատասխանություն դաշնային պահանջներին:**

### **- Ստանդարտ 1. Ինստիտուցիոնալ նպատակների սահմանում և կրթական նպատակների ապահովում**

#### **Ինստիտուցիոնալ նպատակ**

Իր հիմնադրումից ի վեր ավելի քան երեք տասնամյակի ընթացքում ՀԱՀ-ը տպավորիչ աճ է գրանցել իր ակադեմիական առաջարկների, աղմինհստրատիվ աջակցության բաժինների և ֆիզիկական ենթակառուցվածքների շրջանակներում: Ամերիկյան բարձրագույն կրթության մոռելին գուզահեռ մագիստրոսական ծրագրեր առաջարկելու սկզբնական առաքելությունը ընդլայնվել է 2013 թվականից՝ ներառելով բակալավրիատի հիմնական և երկրորդային մասնագիտությունները և ընդհանուր կրթությունը (GE): Հարցազրույցների ժամանակ ծրագրերի տնօրենները նշել են, որ ծրագրի մշակումը, վերլուծությունը և առաջարկները վերընթաց, անձնակազմը հաշվի առնող և ներառական գործընթաց են: Ընթանում են ըննարկումներ ապագա հնարավոր դոկտորական ծրագրերի շուրջ: Հարցազրույցների ժամանակ խորհուրդը, դեկանական կազմը և ուսումնամեթոդական խորհուրդը նշեցին, որ դոկտորական ծրագրերը կարևոր նախապայման են ներքին կարողությունների ձևավորման համար՝ ՀԱՀ-ի հետազոտական ինտենսիվ ջանքերին հասնելու համար: ՀԱՀ-ի հրապարակված առաքելությունը և տեսլականը արտացոլում են համալսարանի նպատակն ու ազդեցությունը համայնքում, տարածաշրջանում և դրանից դուրս (CFR 1.1): Ընդհանուր կրթության (GE) ծրագիրը հիմք է հանդիսանում ՀԱՀ-ի կրթական նպատակներին հասնելու համար և ապահովում է կյանքի համար ընդհանուր գիտելիքների և հմտությունների լայն շրջանակ: Ընդհանուր կրթության ծրագիրը որպես ծրագիր վերանայվել է 2019թ.: Ծրագրերի կրթական նպատակները և ուսանողների ուսումնառության արդյունքները, ներառյալ ընդհանուր կրթությունը, հրապարակված են դասընթացի ծրագրում, կատալոգում և համալսարանի կայքում (CFR 1.2):

ՀԱՀ-ի Ակադեմիական ծրագրերի, ծառայությունների և ուսանողական վճարների մասին տեղեկությունները հրապարակված են նաև կատալոգում և տեղադրված են բուհի կայքում: Բոլոր բակալավրական ծրագրերը կատալոգում նկարագրված են որպես քառամյա ծրագրեր, և բակալավրական ծրագրերի մեծ մասը հրապարակում է տիպիկ քառամյա ծրագրի ավարտման ժամանակացույցը: Մագիստրատուրայում առկա ուսման տևողությունը հրապարակվում է յուրաքանչյուր ծրագրի կատալոգում: ՀԱՀ-ն իր տարեկան փաստագրի և տվյալների հարթակի միջոցով պարբերաբար հրապարակում է ուսանողների ձեռքբերումների վերաբերյալ իր հավաքած տվյալները, ներառյալ պահման և ավարտական ցուցանիշները (CFR 1.6): Ուսանողների կատարողականի գնահատումների ամփոփագիրը միշտ չէ, որ հրապարակվում է համալսարանի կայքում, ինչպես ՀԱՀ-ն ընդունում է իր Ինստիտուցիոնալ գեկույցում (CFR 1.2): Պարբերական գնահատման ուղեցույցները տալիս են կոնկրետ նպատակներ, գնահատման մեթոդներ, ժամանակացույցեր, պատասխանատու կրղմեր և քացահայտումներին ի պատասխան խնդիրները կարգավորելու ռազմավարություններ: Որոշ ծրագրերի համար գնահատման գեկույցները չեն հրապարակվել 2019 թվականից ի վեր՝ հնարավոր է համաճարակի և այլ արտաքին իրավիճակների հետևանքով առաջացած խափանումների պատճառով: Մյուս ծրագրերի վերաբերյալ կրկին սկսել են գեկույցներ հրապարակվել 2021 թվականին: ՀԱՀ-ը մշակել և հրապարակել է համապատասխան հայտարարություն՝ դասախոսական կազմի և ուսանողների ակադեմիական ազատությունը պաշտպանելու համար, ներառյալ պատշաճ ընթացակարգերը (CFR 1.2): Այն նաև հրապարակել է քաղաքականություն և գործնթացներ, որոնք ապահովում են ուսանողների հանդեպ արդար և հավասար վերաբերմունքը բողոքների, գնահատականների, ուսանողների վարքագծի, ֆինանսական օգնության և փոխհատուցումների վերաբերյալ (CFR 1.3): Այլ առկա քաղաքականությունները վերաբերում են հետազոտական եթիկային և խտրականությանը, ներառյալ հաշմանդամության խտրականությունը (CFR 1.3, 1.7):

#### **Անազառություն և թափանցիկություն**

Իր բազմաթիվ և համապարփակ քաղաքականությունների միջոցով ուսումնական և աղմինիստրատիվից մինչև ֆինանսական և տեխնոլոգիական, վարքագծի կանոններից մինչև շահերի բախումը, ՀԱՀ-ը ցուցաբերում է անազառություն և թափանցիկություն իր գործունեության մեջ: Արտաքին ֆինանսական առողջատներն իրականացվում են ամեն տարի: Ի պատասխան Հանձնաժողովի նախկին ակնկալիքների՝ բազմազանությանը հավատարմությունը սահմանելու և զարգացնելու համար հետազա աշխատանքների վերաբերյալ, ՀԱՀ-ն իր ինստիտուցիոնալ գեկույցի մի հատվածը հատկացրել է բազմազանության, արդարության և ներառման խնդիրներին՝ ի պատասխան ձեռնարկված գործողությունների մանրամասն նկարագրությանը (CFR 1.4): Բազմազանության իր նպատակների իրականացման շուրջ ՀԱՀ-ն պրոակտիվ դիրքորոշում ունի՝ ստեղծելով

վարկերի և կարիքների վրա հիմնված ֆինանսական աջակցության ծրագիր և արժանիքների վրա հիմնված կրթաթոշակներ միջազգային ուսանողների համար: Ինստիտուցիոնալ գեկույցում նշվում է, որ ՀԱՀ-ն առաջին համալսարանն է Հայաստանում, որն ունի ֆիզիկապես մատչելի համալսարան և մշակել է քաղաքականություն հաշմանդամություն ունեցող ուսանողների համար (CFR 1.4): Իր գործողությունների ծրագրում ՀԱՀ-ը կիսվեց իր նպատակներով վերանայել փոխհատուցման, առաջխաղացման, մասնագիտական զարգացման հնարավորությունների և աշխատանքային ծանրաբեռնվածության հավասարության սահմանումը, ինչպես նաև վերանայել քաղաքականությունը DEI-ի տեսանկյունից (CFR 1.4):

ՀԱՀ-ին աջակցում են երկու հոգաբարձուների խորհուրդներ: Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կորպորացիան (AUAC), որը գտնվում է Միացյալ Նահանգներում, կազմված է գլխավորապես հայկական ծագում ունեցող անդամներից և փոխկապակցված է Կալիֆորնիայի համալսարանի (UC) համակարգին: Խորհրդի մի քանի անդամներ Կալիֆորնիայի համալսարանի ներկայիս կամ նախկին դասախոսներ և դեկաններ են: Հայաստանում գործող խորհուրդը, Ամերիկյան համալսարանի հիմնադրամի խորհուրդը (ԱՄՀՀ), Հայաստանի կառավարության կողմից պահանջված մարմին է: Խորհրդի(ների) հետ հարցազրույցների ժամանակ անդամները նշել են, որ իրենք հպարտանում են հաստատության զարգացմամբ, ուսանողների ընդունելության աճով, դասախոսների որակով և անդամների ընդհանուր ոգևորությամբ և ներգրավվածությամբ (CFR 1.5): Նրանք նաև նշեցին իրենց առաջնահերթությունները ՀԱՀ-ի համար՝ 1) Ավելացնել ուսանողների քանակը երկիր պահանջներին համապատասխանելու համար, 2) Պահպանել ՀԱՀ-ը որպես բոլոր կողմերի (արդյունարերություն, կառավարություն, այլ հաստատություններ, համայնք) կողմից ճանաչված բարձրագույն կրթության ապարադաբական հաստատություն, 3) Ֆինանսավորել ծրագրված աճը և ընդլայնումը և ներդնել այն՝ տարածաշրջանային քաղաքական (պատերազմական) և տնտեսական խնդիրների (տեղական արժույթի աճ) շրջանակներում, 4) Ներգրավել և ավելացնել մշտական կադրերի կազմ՝ ժամանակավորապես աշխատող դասախոսների փոխարեն, և 5) Հզորացնել հետազոտական ենթակառուցվածքը և բարձրացնել հետազոտության արդյունավետությունը և մշակել դոկտորական ծրագիր: ՀԱՀ-ը ստացել է նշանակալի փոփոխության թույլտվություն՝ սկսելու առաջարկել RN-ից BSN ծրագիրը, որը մեկնարկել է 2022 թվականի աշնանը: Անցյալի փորձը ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի հետ հաղորդակցության մեջ բաց լինելու ապացույցն է (CFR 1.8): Հետագա աշխատանքի ոլորտները ներառում են ուսանողների ուսուցման արդյունքների հետևողական գնահատումը՝ ակադեմիական ծրագրերում, ինչպես նաև ուսանողների ուսուցման ապացույցների կանոնավոր հրապարակային գեկույցներ (CFR 1.2):

Հարցագրույցների ժամանակ անդամները խորհուրդ էին տալիս, որ ղեկավարության շփումը խորհրդի և դասախոսական կազմի հետ լինի ավելի թափանցիկ՝ կապված աճի ցանկալի նախագծի, մարտահրավերների և դրա իրականացման հետ: Ուսանողները խորհուրդ տվեցին համալսարանին վերանայել ուսանողների հաղորդակցման հարթակները և պարզեցնել դրանք՝ արդյունավետություն և հետևողականություն ապահովելու համար:

### *Եղբակացություն*

Ըստ թիմի եղբակացության, որը ենթակա է վերանայման Հանձնաժողովի կողմից, հաստատությունը 1-ին ստանդարտին համապատասխանության բավարար ապացույցներ է ներկայացրել:

- *Ստանդարտ 2. Կրթական նպատակների իրականացում հիմնական գործառույթների միջոցով*

### *Ուսուցում և ուսումնառում*

Մի շաբթ նախաձեռնություններ, ինչպիսիք են ֆինանսական օգնությունը, ապահովել են բարձրագույն կրթության արդյունավետ մոդելներ Հայաստանում և տարածաշրջանում հիմնված ամերիկյան արժեքների և մանկավարժության վրա: Որպես ՀԱՀ-ի՝ ոչ միայն ուսանողների, այլև համայնքի և տարածաշրջանի վրա ազդելու առաքելությունն իրականացնելու միջոց, բացի կրթական ծրագրերը, քոլեջները հիմնել են գիտահետազոտական կենտրոններ, որոնք գրադարձում են գարգացման խնդիրներին առնչվող կիրառական հետազոտություններով:

ՀԱՀ-ի հատուկ մասնագիտացված հավատարմագրումներ ստանալու որակավորումը խոսում է նաև ուսուցման և ուսումնառության կարևորության մասին (CFR 2.1): Հաստատությունը իրապարակում է բոլոր ծրագրերի՝ ներառյալ ընդհանուր կրթության, հստակ նկարագրությունները, կրթական նպատակները և ուսանողների ուսումնառության արդյունքները ուսումնական ծրագրերում, կատալոգում և համալսարանի կայքում (CFR 2.2):

### *Կրթադրությակ և ստեղծագործական գործունեություն*

Որպես անզգական համալսարան՝ ՀԱՀ-ը Հայաստան է ներգրավել հարյուրավոր ամերիկյան և արևմտյան կրթություն ստացած դասախոսների, հիմնել է համալսարանի կրթության ծրագիր մեծահասակների շարունակական ուսուցման համար, ներդրել է անլար ինտերնետ և վիդեո կոնֆերանս համալսարանական քաղաքում, ստեղծել է առաջին համալսարանական գրադարանը՝ հանրություն համար ազատ մուտքով, գրքերով և էլեկտրոնային հավաքածուներով, բացել է համալսարանական խորհրդատվական ծառայություններ, հիմնել է Մաթեմատիկայի և գրչության կենտրոնը և եղել է առաջին համալսարանը, որը կատարել է ավարտական արարողությունները Հայաստանում: ՀԱՀ-ը հաստատել է դասախոսական կազմի և ուսանողական հետազոտության

քաղաքականություն (CFR 2.8), և հաստատությունն ունի հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ կապված դասախոսների գնահատման, առաջիադացման և պաշտոնավարման հետ (CFR 2.9):

#### *Ուսանողների ուսուցում և հաջողություն*

Ուսանողների ուսումնառության բոլոր արդյունքներն արտացոլված են դասընթացի ծրագրերում (CFR 2.4), իսկ ուսանողների ուսուցման գեկույցների գնահատումներն ու արդյունքները ցույց են տալիս ուսուցման ակնկալիքների և կատարողականի չափանիշների համապատասխանությունը (CFR 2.5, 2.6): Գտնվելով Միացյալ Նահանգներից դուրս՝ ՀԱՀ-ը չի գեկուցում Հետմիջնակարգ կրթության տվյալների ինտեգրված համակարգին (IPEDS), բայց կատարում է չորս տարվա ավարտական ցուցանիշների հրապարակյախն գեկույց. ՀԱՀ-ի քառամյա ծրագրով շրջանավարտների միջին ցուցանիշը կազմում է 65,5%, իսկ վեցամյա ծրագրով շրջանավարտների միջին ցուցանիշը՝ 81,3%: Անցած չորս տարիների պահպանման և ավարտական աշխատանքների տարանջատված տվյալները արտացոլված են տարեկան Փաստաթղթերում և Տվյալների հարթակում, և ՀԱՀ-ը պարբերաբար հրապարակում է ուսանողների կատարողականի հավաքագրված տվյալները (CFR2.10): ՀԱՀ-ը տրամադրում է ուսանողների ակադեմիական խորհրդատվության գործընթացների նկարագրությունը, որը բացատրում է աստիճանի պահանջները, առաջարկվող դասընթացները և ուսման վարձերը (CFR 2.12): Թիմը խրախուսում է ՀԱՀ-ին դիտարկել խորհրդատվական մոդելների ուսումնասիրությունը, որոնք կարող են ավելի անհատականացված, ուսանողակենտրոն մոտեցում առաջարկել գործող խմբակյախն խորհրդատվության համակարգին ցուցահետո: Թիմը հաստատեց, որ ուսանողների աջակցության ծառայությունները, ինչպիսիք են հասակակիցների ուսուցումը, գրչական և մաթեմատիկական կենտրոնը, ուսանողական սեմինարները և խորհրդատվական ծառայությունները, լայնորեն օգտագործվում են (CFR 2.13): Թիմը խրախուսում է ՀԱՀ-ին դիտարկել անհատականացված կացարանների և մատչելիության ծառայությունների ընդլայնումը, բարձրացնել տեղեկացվածությունն ու ուսուցումը և անհրաժեշտ սարքավորումներ տրամադրել՝ բավարարելու ուսանողական համայնքի աճող պահանջարկը՝ պլանավորված ընդլայնմանն ու աճին համահունչ: Բացի այդ, թիմն առաջարկում է, որ ՀԱՀ-ը հաշվի առնի ընդունելության չափանիշների և ընդենուլությունների միջև հավասարակշռությունը՝ գնահատելով, թե արդյոք ավելի նեղ չափանիշների շեշտադրումը կարող է լրացնել հաստատության ընդլայնման և զարգացմանն ուղղված ջանքերը: Եվ վերջում, թիմը խորհուրդ է տախս ՀԱՀ-ին շարունակել ամրապնդել ինստիտուցիոնալ ճկունությունը՝ մշակելով և լայնորեն տարածելով արտակարգ իրավիճակներում գործողությունների պլաններ՝ ճգնաժամի ժամանակ ուսումնական և գործնական շարունակելիությունը պահպանելու համար (CFR 1.7, 2.1, 3.1, 3.6, 3.7):

#### *Եզրակացություն*

Ըստ թիմի եզրակացության, որը ենթակա է վերանայման Հանձնաժողովի կողմից, հաստատությունը 2-րդ ստանդարտին համապատասխանության բավարար ապացույցներ է ներկայացրել:

- *Ստանդարտ 3. Ուսուրաների և կազմակերպչական կառույցների մշակում և կիրառում՝ որպես և կայունության ապահովման համար:*

ՀԱՀ-ն օգտվել է Կայիֆորնիայի համալսարանի հետ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում, Հայաստանի կառավարության կողմից շենքերի և շինությունների տրամադրման, և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցության շրջանակներում: Այս ամենը և լրացուցիչ ռեսուրսները ամուր հիմքեր են ստեղծել ՀԱՀ-ի համար: Ընդունելության և ծրագրերի առաջարկների ավելացմանը հասնելու համար ՀԱՀ-ն առաջնահերթություն է տալիս ֆինանսական կառավարմանը՝ յոթ տարվա հավասարակշռված բյուջեներով, շեշտը դնելով դրամահավաքի և նվիրատվության ֆոնդի աճի վրա և ծախսերի կոնսերվատիվ մոտեցմամբ: ՀԱՀ-ն այս ռեսուրսները կենտրոնացրել է ուսանողների ընդունելությանն ու ծրագրերի աճին աջակցելու վրա: Ծրագրերի առաջարկների ավելացումը և ընդունելության աճը հանգեցրին առկա ուսուցման ընդգրկվածության աճին 1446-ից 2015 ֆինանսական տարում մինչև 2247-ը 2023 ֆինանսական տրում: 2019 թվականի աշնանից մինչև 2021 թվականի աշունը ուսանողների ընդհանուր ընդգրկվածությունը աճել է 16%-ով: 2023 ֆինանսական տարվա ընդունելության թիվը կազմում է 1811 բակալավրական ծրագրով ուսանողներ կամ ընդհանուր ընդունվածների 80%-ը, մինչդեռ մագիստրական ծրագրով ուսանողների թիվը կազմում է 436 կամ ընդհանուր ընդունվածների 20%-ը: Այս աճը ընդլայնել է առկա ռեսուրսների մոդելները, և ՀԱՀ-ը պետք է շարունակի կապ պահպանել իր շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելու աջակցության համակարգերի արդյունավետություն աճին գուգահեն:

#### *Դասախոսական կազմը և անձնակազմը*

Պարզ է, որ ՀԱՀ-ի դասախոսական կազմը և անձնակազմը նվիրված են այս հաստատությանը և քաջ գիտակցում են դրա ազդեցությունը Հայաստանի վրա: ՀԱՀ-ի դասախոսական կազմը ներառում է 262 դասախոս՝ 82-ը լրիվ դրույքով են, 180-ը՝ կես դրույքով ընդհանուր 262-ից, 184-ը հիմնական դասախոսներ են: ՀԱՀ-ը չունի մշտական աշխատանքի համակարգ, սակայն ունի բազմամյա պայմանագրեր: ՀԱՀ-ը կենտրոնացել է իր լրիվ դրույքով դասախոսական կազմի ընդլայնման վրա, որն աճել է 43-ից 2016 ֆինանսական տարում հասնելով 82-ի 2023 ֆինանսական տարում գրանցելով 48% աճ յոթ տարվա ընթացքում: Թեև դասախոսական կազմի թիվը բավարար է ծրագիրն ապահովելու համար, համայնքում, ներառյալ խորհուրդը, բազմիցս քննարկումներ են եղել մշտական դասախոսների թվի ավելացման, ծրագրի և ուսանողների աճի կազմակրման

և աշխատողների թերը՝ կես դրույքով աշխատանքի ընթացիկ պայմանագրերը կազմելիս, նվազեցնելու անհրաժեշտության մասին: Աշխատողները նաև զգում են աճի ճնշումը. այնուամենայնիվ, նրանք նվիրված են իրենց հաստատությանը և բավարարում են ուսանողների կարիքները: ՀԱՀ-ն ուներ 155 աշխատակից 13 ֆինանսական տարում և աշխատակիցների թիվը աճել է 43%-ով մինչև 222՝ 2022 ֆինանսական տարում: Այս թիվը չի ներառում ծառայողական անձնակազմը, որը 2022 ֆինանսական տարում աշխատել է առլեսորսինգով: Դդասախոսական կազմը և անձնակազմը բավարար թիվ են կազմում, ունեն մասնագիտական որակավորում և բազմազանություն՝ հասնելու հաստատության կրթական նպատակներին, հիմնելու և մշտադիտարկելու ակադեմիական քաղաքականությունը և ապահովելու նրա ակադեմիական և համատեղ կրթական ծրագրերի ամբողջականությունն ու շարունակականությունը: Այնուամենայնիվ, ծրագրերի թվի և ուսանողների ներգրավվածության զգալի աճի պատճառով պետք է գնահատվեն մարդկային և ֆիզիկական ռեսուրսները (CFR 3.1–3.3):

### **Ֆիսկալ, ֆիզիկական և տեղեկատվական ռեսուրսներ**

ՀԱՀ-ը ներդրումներ է կատարել իր ֆինանսական, ֆիզիկական և տեխնոլոգիական ենթակառուցվածքներում: ՀԱՀ-ը ֆինանսապես կայուն է և իրականացնում է ոչ որակավորված անկախ ֆինանսական առլիիտ: ՀԱՀ-ն ամրապնդել է իր ֆինանսական դիրքը տարբեր ոլորտներում դրամահավաքըների ավելացման, ծախսերի խփսումը և առաջականացման, աճող նվիրատվությունների վրա, ինչպես ԱՄՆ դոլարով, այնպես էլ հայկական դրամով, կենտրոնացման և հաստատությունների համար արտաքին դրամաշնորհներ ստանալու շարունակական հաջողության միջոցով: ՀԱՀ-ն իր ֆինանսական հնարավորությունները հասու է դարձրել իր ուսանողներին՝ հիմնելով առաջին ուսանողական վարկային և ըստ անհրաժեշտության վերապատրաստման ծրագրեր Հայաստանում: Այն ֆինանսավորվում է ինչպես դրամահավաքի արդյունքում ստացված կրթաթոշակներով, այնպես էլ տարեկան ուսման վարձի 26%-ը հատկացնելով ֆինանսական օգնությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքը բավարար է դասախոսական կազմի, անձնակազմի, աղմինիստրատորների և ուսանողների աշխատանքին աջակցելու համար: ՀԱՀ-ը շարունակում է կենտրոնանալ կիրեանվտանգության, ինչպես նաև գործընթացների և փոփոխությունների կառավարման վրա իր օժանդակ համակարգերում: Թեև տարածքները ընդլայնվել են, լրացուցիչ տարածք է պահանջվում շարունակական աճի համար: Վերջին ավելացումները ներառում են 2021թ. բացված կացարանը, 2024թ. նախատեսված մեղիա լաբորատորիան, որը նախատեսվում է բացել 2024թ., և մինչև 2027թ. սպասվող նոր համալիր շենքի պլաններ: Ղեկավարությունն օգտագործում է ստեղծագործ լուծումներ՝ 2027 թ. ընդլայնումից առաջ տարածքի սահմանափակումների խնդիրը լուծելու համար, և պետք է շարունակել այս նախաձեռնություններին առաջնահերթություն տալ, ինչպես նաև ավելի լավ տեղեկացնել համալսարանական համայնքին այս զարգացումների մասին (CFR 3.4, 3.5): Թիմը ՀԱՀ-ին

խորհուրդ է տալիս նպաստել վերջին և սպասվող ընդունելության աճին՝ առաջնահերթություն տալով ՀԱՀ-ի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացահայտմանը և նրանց հետ փոխգործակցությանը՝ առանց գերազանցելու կարողությունները, միաժամանակ հավասարակշռելով դասախոսների, անձնակազմի, տարածության և շենքերի կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունները. (CFRs 3.5, 4.7):

#### **Կազմակերպչական կառուցվածքները և որոշումների կայացման գործընթացներ**

Հաստատության կազմակերպչական կառուցվածքը և որոշումների կայացման գործընթացները հստակ և համարունչ են նրա նպատակներին, աջակցում են արդյունավետ որոշումների կայացմանը և առաջնահերթություն են տալիս ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական արդյունավետության պահպանմանը (CFR 3.6): ՀԱՀ-ին աջակցում են երկու հատուկ խորհուրդներ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի կորպորացիան (ՀԱՀ) և Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամը (ՀԱՀՀ), որոնք կազմված են կրթության և դրամահավաքի զգալի փորձ ունեցող անդամներից ԱՄՆ-ից: ՀԱՀ-ը վերջերս հաջողությամբ նոր նախագահ է զիսավորել, բացի այդ այն ունի բավարար թվով որակավորված և նվիրված վարչական դեկավարներ՝ աջակցելու իր աճի ծրագրերին (CFR 3.8): Բոլոր դեկավարները, որոնց հետ զրուցել է թիմը, կենտրոնացած էին ՀԱՀ-ի ազդեցության վրա ուսանողների և ավելի լայն համայնքի վրա՝ պահպանելով իրենց մոտեցման ամբողջականությունը: Ֆակուլտետի խորհրդի՝ համալսարանի կառավարման մեջ իր դերի բարձրացման անհրաժեշտությունը նշվել է ինստիտուցիոնալ անկախ հետազոտություննորի ժամանակ (CFR 3.6–3.10):

#### **Եզրակացություն**

Ըստ թիմի եզրակացության, որը ենթակա է վերանայման Հանձնաժողովի կողմից, հաստատությունը 3-րդ ստանդարտին համապատասխանության բավարար ապացույցներ է ներկայացրել:

- *Ստանդարտ 4. Որևէ ապահովմանը, ինստիտուցիոնալ ուսուցմանը և կատարելագործմանը ձգողող կազմակերպության ստեղծում:*

#### **Որևէ ապահովման գործընթացներ**

Թիմը հաստատեց, որ առկա են որակի ապահովման գործընթացներ տվյալների հավաքագրման և արդյունավետ օգտագործման համար (CFR 4.1): ՀԱՀ-ն ունի մի քանի լավ կայացած բազմամակարդակ գնահատման գործընթացներ, որոնք օգնում են իրականացնել ուսանողների նպատակները, ինչպիսիք են՝ դասընթացի ծրագիրը, դասընթացի ավարտի գնահատումը, ուսանողների ուսման տարեկան գնահատումը, ընդհանուր կրթույան գնահատումը, ակադեմիական ծրագրերի պարբերական ստուգումները (APR),

դասախոսների և անձնակազմի գնահատումները, հարցումները (ուսանողների ավարտական հարցումներ և դասախոսների, անձնակազմի և շրջանավարտների պարբերական հարցումները) (CFR 4.1): Համայստանը մշակել է արդյունավետ և ստանդարտացված ուղեցույցներ, ժամանակացույցեր և ակադեմիական գնահատման գործընթացների ձևանմուշներ: ՀԱՀ անդամները (դեկավարներ, դասախոսական կազմ և անձնակազմ) աշխատում են միասին՝ խթանելու պարբերական, տվյալների վրա հիմնված կրթական գնահատման մշակույթը՝ ծառայելու և հասնելու հաստատության առաքելությանը: Ուսանողների կարծիքին մեծ տեղ է տրվում և լայնորեն և հաշվի է առնվում շարունակական բարեկավում ապահովելու համար: ՀԱՀ-ի Ինստիտուցիոնալ հետազոտությունների և գնահատման գրասենյակը (OIRA) հավաքագրում, համեմատում, վերլուծում, գեկուցում և արխիվացնում է տվյալները, հաղորդում է տվյալները և աջակցում է դեկավարությանը, ուսումնական ծրագրերին և ուսումնական աջակցության ուազմավարական պլանավորման և գնահատման գործում շարունակական բարեկավմանը և որակի շարունակական ապահովմանը նպաստելու համար: Գրասենյակը կազմալրվել է երեք անդամներով, որոնք հիմնականում պատասխանատու են տվյալների հավաքագրման, վերլուծության և ներկայացման համար, ինչպես նաև աջակցում են դասախոսներին և աշխատակազմին՝ օգտագործելու տվյալները ուսանողների ուսումը գնահատելու համար:

#### *Ինստիտուցիոնալ ուսուցում և կատարելազործում*

Յուրաքանչյուր հինգից վեց տարին մեկ անգամ ՀԱՀ-ի բոլոր բաժիններն ու ծրագրերը ենթարկվում են մանրակրկիտ, տվյալների վրա հիմնված վերանայման, որը ներառում է բազմաթիվ ներքին շահագրգիռ կողմեր և արտաքին գնահատողներ՝ ապահովելու ակադեմիական ծրագրերի կենսունակությունը, համապատասխանությունը և ներդրումը ուսանողների հաջողության գործում: Ծրագրի դեկավարները համակարգում են վերանայման գործընթացը ծրագրի մակարդակով և կապիաստատում նյուս մասնակիցների հետ: Այս գործընթացները վերահսկվում են Պրովուտի գրասենյակի կողմից՝ OIRA-ի աջակցությամբ: APR-ի ուղեցույցները վերանայվել են Խորհրդի կողմից 2013թ. վերջին ստուգումից և վերահավատարմագրման վերաբերյալ առաջարկություններից հետո, այնուհետև 2017թ.: Լրացուցիչ ճշգրտումները այժմ պետք է կատարվեն համալսարանի ուսումնական ծրագրերի հանձնաժողովի կողմից: OIRA-ն աշխատում է Ղեկավար միավորների և կրթական բաժինների հետ՝ սկսելով մի շարք հարցումներ ուսանողների համար (1-ին կուրսը ավարտած ուսանողների հարցում, 2-րդ կուրսը ավարտած ուսանողների հարցում, 3-րդ կուրսը ավարտած ուսանողների հարցում, բակալավրիատի ուսանողների հարցում, մագիստրատուրան ավարտած շրջանավարտների հարցում, ընդունված առաջին կուրսեցիների հարցում), շրջանավարտների համար (ավարտելուց երեք ամիս հետո, ավարտելուց հետո երեք տարին մեկ հարցում), դասախոսների և անձնակազմի հարցում երեք տարին մեկ և գործատուների բավարարվածության հարցում: Առաջին կուրսեցիների պատասխանները կազմել են հարցման 16%,

2-րդ կուրսը ավարտած ուսանողների հարցումը՝ 25%, 2018 թ. և մագիստրատուրան ավարտած շրջանավարտների հարցումը՝ 18%, որն անցկացվել է 2023թ.: Թիմը խրախուսում է ՀԱՀ-ին մտածել, թե ինչպես ապահովել այս կարևոր աշխատանքի շարունականությունը, մշակել պարբերական ստուգումների մշակույթը և հետևողականորեն իրականացնել բաժինների (ուսումնական և վարչական) ստուգումները և օգտագործել արդյունքներն ու բարելավման առաջարկություններ անել: ՀԱՀ հրատարակում է տարեկան ձեռնարկ և տեղեկագիր, որը պարունակում է վիճակագրություն ուսանողների ժողովրդագրության, ընդունելության, կրթական առաջադիմության, դասախոսական կազմի, հետազոտական կենտրոնների, հաստատությունների և այլնի վերաբերյալ: OIRA-ն տվյալներ է հավաքագրում տարբեր երկրների համալսարանական տեղեկատվական աղյուրներից՝ հաստատության պլանավորման, բյուջետավորման և որոշումների կայացման գործնթացները հեշտացնելու, ինչպես նաև համալսարանական համայնքը տեղեկացված պահելու համար (CFR 4.2): Համալսարանը մշակել է ինստիտուցիոնալ հարթակներ՝ տվյալների դուրգորման հնարավորություններն ավելի ժամանակին, դինամիկ և մատչելի դարձնելով (CFR) 4.2): Հարթակի տվյալների օգտագործումը Հոգարարձուների խորհրդի և Գործադիր կոմիտեի կողմից որոշումների կայացման համար հստակ փաստաթղթավորված չէ: ՀԱՀ-ը մշակել է կրթական աջակցության գրասենյակի վերանայման ուղեցույցներ՝ այս միավորները ամեն տարի վերանայելու համար՝ ձգտելով շարունակական բարելավմանը և ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանը: Ինստիտուցիոնալ ուսուցման և շարունակական ուժեղ մշակույթ ստեղծելը բարելավման գործնթացի վրա ազդեց դեկավարության փոփոխությունը ժամանակավոր նախազահի նշանակմամբ, նոր նախազահի նշանակմամբ, ինչպես նաև պրոռեկտորի թափուր տեղը՝ ինքնուուսումանսիրման և վիրտուալ վերանայման ժամանակ: Նախկին ռազմավարական պլանի առաջընթացը և որակի և արդյունավետության բարելավման առաջնահերթությունների կայացման վրա ազդել են որոշակի գործառնական ձգձգումներ: ՀԱՀ-ը ժամկետներ է սահմանել կրթական ծրագրերի և օժանդակ ստորաբաժանումների արդյունավետության վերլուծություն՝ կենտրոնանալով հիմնականում բակալավրական ծրագրի առաջարկների վրա: Գնահատման փաստաթղթերը, ինչպիսիք են ուսանողների ուսուցման տարեկան գնահատման պլանները, գեկույցները, ամփոփագրերը և Կրթական ծրագրերի վերանայման պլանները արժանահավատորեն հրապարակվում են OIRA-ի կողմից և մուտք գործելու համար պահանջում են գաղտնաբառ: Ծրագրի վերանայման արդյունքում ստացված կետերը սահմանում են դիտարկման և բարելավման ոլորտները: ՀԱՀ-ը կշահի, եթե լայնորեն և հետևողականորեն ավելացնի հաղորդակցությունը և խթանի գնահատման արդյունքների կիրառումը ընթացիկ բարելավման նպատակով (CFR 4.2):

Ուսանողների կարծիքը ակտիվորեն հարցվում է և ներառվում է ուսանողների բարեկալման ծրագրերում սպասարկման բաժինների կողմից: Հարցազրույցի ընթացքում ուսանողների հետ կապերի և դեկանատի աշխատակիցները կիսվեցին խնդրի եզրափակման օրինակներով: OIRA-ն առաջարկում է մի քանի տարեկան սեմինարներ դասախոսական կազմի գարզացման համար. Սեմինարները հիմնականում կապված են դասավանդման և ուսուցման հետ, ոչ թե ֆակուլտետի նոր ուղղության հետ: ՀԱՀ-ը կարող է ցանկանալ բարեկալմել շահագրգիռ կողմերի ուսուցումն ու մասնագիտական գարզացումը, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ ինտեգրվել և օգտագործել նոր գործիքներ ծրագրի վերանայման գործընթացում, ներառյալ տվյալների վերլուծության լավագույն փորձը և մեկնարանությունը (CFR 4.2): Դասախոսները պատասխանատու են իրենց ուսումնական ծրագրերի գարզացման և պարեկալման գնահատման համար՝ գնահատման արդյունքների հիման վրա կատարեկագործմամբ (CFR 4.4): OIRA-ն ներկայացնում է ուսանողների գնահատման տարեկան գեկույց, որը վիճակագրական տեղեկատվություն է տրամադրում դասընթացների և ծրագրերի գնահատումների վերաբերյալ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի մակարդակներում (CFR 4.4): Կան գնահատման կանոններ և գործում է գնահատականների բողոքարկման քաղաքականություն: Ծրագրի վերանայման վերաբերյալ ուղեցույցները ներառում են երկու արտաքին գնահատողների մասնակցությունը վերանայման հանձնաժողովում, և կոմիտեն հանդիպում է շահագրգիռ կողմերի հետ և հայցում նրանց կարծիքը գնահատման գործընթացում (ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ, ծրագրերի դեկավարներ) (CFR 4.5): Օգտագործելով գոյություն ունեցող գնահատման արդյունքները, ՀԱՀ-ը կարող է շահել՝ նախաձեռնելով համապարփակ ռազմավարական պլանավորման գործընթաց: Պահանջվում է ներառել իրականացման մանրամասն ռազմավարություններ՝ մշտադիրական գեկուցման և առաջընթացի հաղորդման կայուն մեխանիզմներով: Այս մոտեցումը կօգնի համապատասխանեցնել ռազմավարական պլանը ՀԱՀ-ի ակադեմիական և գործառնական գործունեությանը և բարձրացնել դրանց դերը արդյունավետ որոշումների կայացման գործում: Թիմը նշել է, որ ՀԱՀ-ը վերահսկում և իրականացնում է ծրագրի վերանայման գործընթացից բխող գործողությունները: Թիմն առաջարկում է առաջընթացի, համապատասխան տվյալների և հետագա առաջնահերթությունների տարեկան լայն քննարկում անցկացնել (CFR): 4.6, 4.7): Դեկանների խորհրդին հանձնարարվել է վերանայել ֆակուլտետի ծանրաբեռնվածության քաղաքականությունը: Թիմ խրախուսում է անում ՀԱՀ-ին գիտակցարար նպաստել տվյալների համատարած տարածմանը և երկխոսությանը՝ տեղեկացված որոշումների կայացման նպատակով (CFR 4.3): Ավելին, թիմը ՀԱՀ-ին խորհուրդ է տալիս պահպանել հստակ և հետևողական փոխգործակցություն շահագրգիռ կողմերի հետ՝ կապված հաստատության աճի նպատակների, մարտահրավերների և հակաբայլերի հետ առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Որպես այդպիսին, ՀԱՀ-ն իրականացնում է ապացույցներով հիմնավորված շարունակական, կանոնավոր և համատեղ ակադեմիական գնահատումներ: Հաստատությունը բարելավման նախաձեռնություններում ինտեգրում է այս մանրակրկիտ վերլուծության արդյունքները, որոնք կարող են ներառել ուսումնական ծրագրերի թարմացում կամ ծրագրերի դադարեցում արտացոլելով արտաքին հետադարձ կապը, ուսանողների պահանջները, շուկայական միտումները, DEI սկզբունքները և չափորոշիչները՝ ԱՄՆ-ի ծրագրերի համեմատ:

#### *Եղանացություն*

Հստ թիմի եզրակացության, որը ենթակա է վերանայման Հանձնաժողովի կողմից, հաստատությունը 4-րդ ստանդարտին համապատասխանության բավարար ապացույցներ է ներկայացրել:

#### **II.C. Մաս 8. Հաստատության հատուկ թեմաները**

- Թեևս առաջին՝ բակալավրական աստիճանի ամրողականությունը:

ՀԱՀ-ն առաջարկում է ութ բակալավրական հիմնական մասնագիտություններ (Գործարարություն, Համակարգչային գիտություն, Անգլերեն, Հայորդակցություն, Տվյալագիտություն, Ծարտարագիտություն, Քաղաքականության և պետական կառավարում, Քույրական գործ և Ծրջակա միջավայր և կայունության գիտություններ): Այս ծրագրերից յուրաքանչյուրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների փորձին, և ամբողջ ծրագիրը, ներառյալ հիմնական մասնագիտության դասընթացները, հիմնական նախագիծը, Ընդանուր կրթության դասընթացները և Կամընտրական դասընթացները, համապարփակ է: Բոլոր շահագրգիռ կողմերը, որոնց հանդիպել է վերանայման թիմը, ներառյալ ակադեմիական դեկանները, դասախոսական կազմը, բակալավրիատի ծրագրերի դեկավարները և ՀԱՀ-ի խորհուրդը միաձայն բարձր գնահատեցին «բարձրորակ, մոտիվացված և փայլուն» ՀԱՀ ուսանողներին: Համալսարանի դեկավարությունը ցանկանում է օգտվել բուհի զարգացման այս դրական հետազծից ընդհանուր առմամբ և շարունակել ավելացնել ուսանողների թիվը և բակալավրական ծրագրերը՝ շարունակելով նպաստել Հայաստանում մտավոր կապիտալի, գիտելիքների բազայի և վերուժական մտածողության զարգացմանը: ՀԱՀ-ի խորհուրդը ընդգծել է, որ ՀԱՀ-ի աճի նկատմամբ այդ հետաքրքրությունը պայմանավորված է «երկրի կարիքներին արձագանքելու ... և տարածաշրջանում ավելի լայն դերակատարում ունենալու անհրաժեշտությամբ» և ապահովել ավելի շատ հնարավորություններ և մարդկային ռեսուրսներ հետագութության համար: Հարցազրույցը Բակալավրական ծրագրի թիմի հետ հայտնաբերել է ՀԱՀ-ի բակալավրական աստիճանների պահանջարկի աճի ընդհանուր

միտում ծրագրերի վերջին վերանայումից հետո<sup>1</sup>, ինչպես նաև ուսանողների մակարդակի բարձրացում, որն արտացոլված է SAT ընդունելության միավորներով և գնահատականներով: <ԱՀ ընդունված ուսանողների ուշագրավ 88%-ը շարունակում է ուսումը: <ԱՀ-ի սկզբունքներին համառունչ բակալավրիատի ծրագրում հաջողությունը ձեռք է բերվում ուսանողների աջակցությանը ինտեգրված մոտեցման միջոցով՝ գիտակցելով, որ ուսանողները աջակցության կարիք ունեն թե՛ լսարանում, թե՛ դրանից դուրս: Վերանայման գործընթացի ընթացքում թիմը տեղիկացնում ուսանողների բազմաթիվ ուղիների մասին, որտեղ աջակցության գրասենյակները, ներառյալ ակադեմիական դեկանները, ֆինանսական օգնությունը, ուսանողական հարցերով բաժինը և գրանցավարը համագործակցում են ուսանողներին իրենց կյանքի բոլոր ոլորտներում անհրաժեշտ աջակցությունն ապահովելու համար:

Դասախոսները և ուսանողները բարձր գոհունակություն են հայտնել բակալավրիատի <ԱՀ-ում ծրագրով: Դասախոսները նշել են, որ տպավորված են բարձր կուրսերի ուսանողներով, ովքեր «քննադատական միտք ունեն, դինամիկ են և փայլուն» և ովքեր ընտրում են <ԱՀ-ը՝ որպես բարձր չափանիշների հեղինակություն ունեցող հաստատություն: Նրանք նաև նշել են ուսանողների ուշագրավ տոկունությունը ներկայիս ճգնաժամային իրավիճակում ներառյալ ոչ վաղ անցյալում տեղի ունեցած պատերազմը, COVID-19 համաճարակը և ներկայիս աշխարհաքաղաքական հակամարտությունները: Չնայած այս մարտահրավերներին, դասախոսները բարձր մակարդակի կոլեգիալություն և մարտական ոգի են զգում: Ուսանողները արտահայտել են բարձր բավարարվածություն և ընդհանուր դրական փորձ <ԱՀ-ում: <Արցին, թե ինչու են ընտրել <ԱՀ-ը, ուսանողներ նշել են մի քանի հիմնական գործոններ՝ բարձրորակ, եզակի կրթություն; Մի վայր, որտեղ կարելի է «ավելի լայն մտածել», որտեղ խրախուսվում է տարրեր տեսակետների և տեսլականների արտահայտումը, և <ԱՀ-ն ավարտելուց հետո հաջող կարիերա ստեղծելու մեծ հավանականություն: Ուսանողները նշեցին, որ իրենց համապատասխան ծրագրերը համապատասխանել են իրենց ակնկալիքներին, և որ դասախոսները ուշադիր, բազմակողմանի զարգացած և բանիմաց են: Թույլ կողմերի մասին հարցին կոնսենսուս չի եղել, մինչդեռ որոշ ուսանողներ կարծում են, որ խմբային աշխատանքը չափազանց շատ է, մյուսները նշում են, որ դասընթացի ընտրության հարցում չափազանց մեծ ինքնուրույնություն է տրվում: Որոշ ուսանողներ նշել են դասավանդող օգնականների չհամակարգված պատրաստվածություն: <Անդիպմանը ներկա բոլոր ուսանողները համաձայնեցին, որ կա <ԱՀ-ի կողմից հաղորդակցության ծանրաբեռնվածություն բազմաթիվ հաղորդակցման մեթոդների տեսքով (օրինակ՝ Է. Փոստ, ուսուցման կառավարման համակարգ (Moodle, Intranet) և որ հաղորդագրությունների օպտիմալացումը օգտակար կլինի:

<sup>1</sup>Օրինակ, Անգլերեն/Հաղորդակցություն ծրագիրը նշել է, որ վերջին շրջանում 90 տեղի համար եղել է ավելի քան 300 դիմորդ: <Ամակարգային գիտություն, տվյալների գիտություն և քույրական ծրագրերը նմանատիպ աճ են գրանցել:

Մի քանի ուսանողներ հետաքրքրվեցի, թե արդյոք ընդունելության չափանիշները նվազում են, բայց դա անհանգստությունը հակասում է վերջերս ընդունված ուսանողների թեստի միավորներին և ՄՈԳ-երին: Ընդհանուր առմամբ, ուսանողները մեծ հարգանք են տածում <ԱՀ-ի հանդեպ և ցանկանում են, որ կարողանան իրենց հպարտությունն արտահայտել ներկայումս համալսարանում չվաճառվող ապրանքների միջոցով:

Բակալավրիատի ուսանողների շրջանում ակադեմիական հաջողություններ ապահովելու համար ուժեղ խորհրդատվական համակարգ է գործում: Խորհրդատու համակարգող անհատապես հանդիպում է ուսանողների հետ, նախքան նրանց դասերին գրանցվելը և յուրաքանչյուր ուսանողի խրախուսում է անցնել «իրական» դասընթացներ: Օրինակ՝ ուսանողներին խորհուրդ է տրվում սկսել իրենց առաջին տարին ավելի քիչ քանակի խտացված դասընթացներով, քան դասեր մեծ քանակությամբ; պատճառն այն է, որ նրանք կշահեն, եթե ժամանակ հատկացնեն համալսարանի մակարդակով աշխատանքին հարմարվելու համար, հատկապես այն ուսանողները, ովքեր հնարավոր է չեն ստացել համապատասխան գրավոր, հաղորդակցման, անզերեն լեզվի և քանակական հմտություններ ավագ դպրոցում: Նրանց համար, ովքեր չունեն այդ հմտությունները, կա ուժեղ և հատուկ ենթակառուցվածք՝ «նրանց արագացնելու» և իրենց համակուրսեցինների մակարդակին համապատասխանելու համար: Քույրական ծրագրում հմտությունների այս բացը իրականում ամենամեծ մարտահրավերներից մեկն է: Քույրական բաժնի ուսանողները մասնակցում են սեմինարների (օրինակ՝ «Ինչպես ստվորել <ԱՀ-ում» և անզերենի դասընթացներ), որոնք օգնում են նրանց ինտեգրվել <ԱՀ ակադեմիական համայնք: Մինչ քույրական ծրագրին դիմելը, նրանք պետք է 18 ամիս անցնեն անզերեն: Ուսանողների հետ հարցազրույցների ժամանակ նշվել է, որ խմբային խորհրդատվության մոդելը աշխատում է գրանցվելուց հետո: Թիմը խրախուսում է <ԱՀ-ին դիտարկել ուսանողակենտրոն, անհատականացված մոտեցում, որը կարող է հարմարեցվել ուսանողի հատուկ կարիքներին և նպաստակներին, ապահովել գաղտնի տարածք զգայուն հարցեր քննարկելու համար և թույլ տալս զարգացնել անձնական հարաբերություններ խորհրդատուի հետ, ինչը կարող է բերել ուսանողի ավելի մեծ պատասխանատվության:

<ԱՀ-ի հիմնական ուժը բակալավրական կրթությանն աջակցելու գործում Ուսանողների հարցերով գրասենյակն է, որի վրա հիմնվում են ուսանողները: <Հիմնական ծրագրերը տեղակայված են Ուսանողների հետ կապերի գրասենյակում, ներառյալ մենթորական ծրագիրը, խորհրդատվական ծառայությունները, բնակության պայմանները, կողմնորոշումը և սկսելը:

Մենքորական ծրագիրը հեղինակավոր ծրագիր է, որը ստեղծվել է ՀԱՀ-ում բակալավրիատի ծրագրերի ստեղծման առաջին օրերին: Այն ներկայումս ունի է 50 մենթորներ, ովքեր տրամադրում են մենթորություն եկող առաջին կուրսեցիներին տարրեր թեմաներով՝ սկսած ակադեմիական ծրագրի պլանավորումից մինչև համալսարանում կողմնորոշվելը, ապագա կարիերայի պլանավորումը և ընդհանուր հուզական աջակցությունը: Ընկերներ մենթորները բարձր որակավորում ունեն ինտենսիվ վերապատրաստումից հետո, որպեսզի ոչ միայն աջակցեն իրենց ընկերներին, այլև ձեռք բերեն արժեքավոր առաջնորդության փորձ:

Covid-19 համաճարակը և արցախյան պատերազմը՝ գուգորդվելով տարածաշրջանում աշխարհաքաղաքական վերջին հակամարտությունների հետ, ՀԱՀ համայնքի մոտ առաջացրել է էմոցիոնալ անվստահություն: Որպես հետևանք՝ ուսանողների հարցերով գրասենյակի կողմից առաջարկված Խորհրդատվական ծառայությունների գրասենյակում աճել է խորհրդատվության դիմոյ ուսանողների թիվը: Միայն վերջին մեկ ամսում ավելի շատ հայտ է ստացվել, քան նախորդ ամբողջ կիսամյակում: Ներկայումս կա ընդամենը երեք աշխատող (երկուսը կես դրույքով և մեկը լրիվ դրույքով): ովքեր կարող են հոգեքանական ծառայություններ մատուցել: Ընդունվել է, որ այս ոլորտում անձնակազմի ավելացման անհրաժեշտություննկա: ՀԱՀ-ի աշխատակիցները նշել են, որ թեև հոգեկան առողջության համար դիմողների հանդեպ Հայաստանում կա խարան, ուսանողները ձգտում են դրան: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ առաջին կուրսի ուսանողները խրախուսվում են դիմել այս ծառայություններին, ինչը խորհրդատվական թիմի գովելի հատկանիշն է: Բացի այդ, նրանք արձագանքել են ուսանողների հետաքրքրությանը արական սերի խորհրդատու համար՝ վերջերս վարձելով տղամարդ խորհրդատու լրիվ դրույքով: Խորհրդատվական խումբը նաև սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ է անցկացնում դասախոսների և անձնակազմի համար: Խորհրդատվական թիմի ապագա նպատակն է հարցում անցկացնել՝ պարզելու, թե արդյոք ուսանողները բավարար մակարդակով են ստանում իրենց կողմից պահանջվող ծառայությունները:

ՀԱՀ-ի ֆինանսական օգնությունը համընկնում է ամերիկյան համալսարանների հետ և հիմնված է այն փիլիսոփայության վրա, որ բոլոր ընդունված ուսանողներին պետք է հնարավորություն տրվի սովորելու ՀԱՀ-ում անկախ ֆինանսական հնարավորություններից: Ուսանողներին հասանելի են ֆինանսական օգնության չորս հիմնական տեսակ՝ կարիքների վրա հիմնված և արժանիքների վրա հիմնված, եկուն վճարման պլաններ և անտոկոս վարկեր: Դրանք հասանելի են Հայաստանի բոլոր քաղաքացիներին: Համալսարանական հանրակացարաններում ապրող ուսանողների թիվը ներկայումս սահմանափակված է հիսունվեց ուսանողով:

Առաջնահերթությունը տրվում է օտարերկրյա ուսանողներին, և կա բնակարանների սպասման ցուցակ: Ֆինանսական օգնություն ստացող ուսանողներ իրավունք ունեն նվազեցնել բնակարանային վարձավճարը:

ՀԱՀ Ուսանողների հարցերով գրասենյակում անցկացվում են նաև նոր ուսանողների կողմնորոշման և ավարտական արարողություններ: Երկօրյա կողմնորոշման ծրագիրը, որն իրականացվում է ընդունելության գրասենյակի հետ համատեղ, օգնում է ուսանողներին հարմարվել համալսարանին, հյուրընկալում է բաց դրոներ և առաջարկում ծրագրեր, որոնք ամրապնդում են համայնքը և հպարտությունը համալսարանում: Նրանք նաև աշխատում են ուսանող վետերաններին լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Աշխատանքը, որը Ուսանողների հարցերով թիմը կատարում է ուսանողների համար, շատ գովելի է: Այնուամենայնիվ, ունենալով միայն 12 աշխատող, թիմը գերծանրաբեռնված է, և ավելի շատ լրիվ դրույքով աշխատողներ ավելացնելը մեծապես կնպաստի բակալավրիատի (և ավարտական) ընդհանուր փորձին: Լրացուցիչ անձնակազմը թույլ կտա ՀԱՀ-ին հասնել ավելի մեծ բարձունքների ուսանողների հետ հարցերում դրանք հավասարեցնելով ԱՍՆ բուհերում առաջարկվող ծառայություններին՝ ներառյալ սպորտային ծրագրերի գարգացումը, ավելի մեծ ուշադրություն արտասահմանում սովորելու համար ծրագրերին, որոնք տուժել են COVID-19 համաճարակի ժամանակ, և ակադեմիական հմտությունների գարգացումը (օրինակ՝ գրչական կենտրոն):

Մի քանի շահագրգիռ կողմերի հետ հարցագրույցների ժամանակ նշվել է ուժեղ իբնավերյուծություն՝ բակալավրական փորձի բարելավման ուղիների վերաբերյալ: Օրինակ՝ նշվել է, որ ուսանողներից տվյալների ավելի մեծ հավաքագրումը ՀԱՀ-ում իրենց ընդհանուր ուսումնառության փորձի վերաբերյալ կարևոր է բարելավման հնարավորությունները բացահայտելու համար: Հետաքրքրություն կա նաև ծրագրերը փոխելիս ուսանողների շրջանում հարցումներ կատարել. վերանայման թիմը համաձայն է այս գաղափարի հետ: Այս տվյալները համալսարանին կօգնեն լուծել խնդիրը, որը վերանայող թիմը լսել է մի քանի հանդիպումներում մեր ընթացքում՝ “Արյո՞ք մենք հանում ենք կրթական հաջորդ մակարդակին մեր ուսանողների համար”: Հետաքրքրություն կա նաև ուսանողներին ուսուցման ավելի մեծ հնարավորություններ տրամադրել՝ խմբային նախագծային աշխատանքի միջոցով: Այնուամենայնիվ, ուսանողական հանդիպման ժամանակ մի քանի ուսանողներ նշեցին, որ արդեն շատ են բազմաթիվ խմբային նախագծերը: Մտահոգությունը, որը մենք շատ ենք յսել շահագրգիռ կողմերից, այն է, որ մեծ թվով ուսանողներ (75% ըստ մի գնահատման) աշխատում են կես դրույքով կամ լրիվ դրույքով, որոնք կապված չեն իրենց ակադեմիական աշխատանքի հետ, ինչը կարող է շեղել նրանց ուսումից և ՀԱՀ-ում ազատ ժամանակ կրթական և արտածրագրային գործունեությամբ գրաղվելու հնարավորությունից: Կես դրույքով (կամ լրիվ դրույքով) գրաղվածության

ազդեցությունը կրթական փորձի վրա գնահատելու համար անհրաժեշտ են ավելի շատ տվյալներ: Վերջապես, ապագայի նպատակն է ավելի լավ համակարգել բակալավրիատի ծրագրերը տարբեր ծրագրերի հետ, քանի որ ծրագրերում ներկայումս օգտագործվում են ընդունելության տարբեր մոտեցումներ և այլն:

Բազմազանության, հավասարության և ներառման ընդլայնամանն ուղղված իր հանձնառությանը համահունչ ՀԱՀ-ն ունի անող հետաքրքրությունը քրոնիկ և ժամանակավոր հաշմանդամություն ունեցող ուսանողներին ավելի լավ աջակցության ծառայություններ տրամադրելու հարցում: Այս հարցով աշխատանքային խումբը նշել է մատչելիության որոշ խնդիրներ՝ կապված հաշմանդամության աջակցության համար սարքավորումների սահմանափակման հետ: Համալսարանի գրադարանն ունի տեսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար նախատեսված սարքավորումներ, սակայն չունի աջակցություն, օրինակ, լսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար: Նաև ավելի համապարփակ աջակցություն տրամադրելու կարիք կա, ինչպիսին է ուսումնառության անկարողության թեստավորումը: Ընդունվել է, որ լրացուցիչ անձնակազմ ընդունելու կարիք կա՝ բազմազան խնդիրներ ունեցող ուսանողների համար այս լրացուցիչ աջակցությունն ապահովելու համար:

Բազմազանությունն ընդլայնելու մեկ այլ միջոց ՀԱՀ-ը մտադիր է կիրառել ընդունելության գործընթացը: Չնայած COVID-19 համաճարակը ազդել է հավաքագրման ջանքերին, դիմումներ թիվը աճել է 2020թ.-ից ի վեր: Այնուամենայնիվ, ընդունող թիմը մտածում է, թե ինչպես մեծացնել տեղեկացվածությունը ՀԱՀ-ի անգլերեն լեզվի ուսուցման ներառականության, հասանելիության (օրինակ՝ ֆինանսական օգնություն) և աջակցության մասին՝ որպեսզի ուսանողներ ներգրավի Երևանից դուրս մարգերից:

Վերանայման գործընթացի ընթացքում կրկնվող թեման, որն ուղղակիորեն ազդում է Բակալավրի աստիճանի ամբողջականության վրա դա ավելի շատ լրիվ դրույքով դասախոսների պահանջն է<sup>2</sup>: Ներկայումս դասախոսների մոտ 75% ժամանակավոր հիմունքով դասախոսներ են, որոնք աշխատանքի են ընդունվել պայմանագրային հիմունքներով (սովորաբար երեք տարվա պայմանագրով) և զգալի բեռն ընկնում է նրանց վրա, ովքեր լրիվ դրույքով են աշխատում դասավանդում, հետազոտություն կատարում և պաշտոնավարում: Օրինակ՝ նշվել է, որ Անգլերեն/Հաղորդակցություն ծրագրում միայն մի քանի դասախոսներ են ժամանակ տրամադրել ծրագրի գնահատման համար, քանի որ ծառայության ակնկալիքները «հստակ սահմանված չեն և անորոշ են», և քիչ թվով մարդիկ «շատ պարտականություններ ունեն»: Այսպիսով, ծառայության բացերը լրացնելու բեռը ընկնում է ծրագրի դեկավարի վրա, և շատ շահագրգիռ կողմեր նշել են, որ լրիվ դրույքով դասախոսների տոկոսի ավելացումը կօգնի թեթևացնել այս բեռը: Լրացուցիչ առավելություն կինհ այն դասախոսների թվի ավելացումը, ովքեր կարող են ժամանակ

<sup>2</sup>ՀԱՀ-ում առկա չէ մշտական պաշտոնավարում

հատկացնել հետազոտությունների կատարմանը, ինչը ՀԱՀ Խորհրդի առաջնահերթություններից է: Ներկայումս, լրիվ դրույքով դասախոսների կողմից մատուցվող ծառայությունների ծավալը՝ զուգորդված դոկտորական ծրագրի բացակայության հետ, կատարվում է հետազոտությունների կատարման հաշվին: Այնուամենայնիվ, հարցազրույցների բազմաթիվ մասնակիցներ ընդգծեցին «տվյալ ոլորտի խմացությունը», որոնք ժամանակավոր դասախոսները բերում են ՀԱՀ: Ֆակուլտետի և Սենատի հետ հանդիպման ժամանակ նրանք նշել են, որ ծանրաբեռնվածության բաղաքանությունը վերանայման և ճշգրտման կարիք ունի: Ներկայիս բաղաքանությունը համահունչ չէ բուհի՝ որպես գիտահետազոտական հաստատության, ձգումներին, և ծանրաբեռնվածության բաշխումը և դասախոսական կազմի կատարողական տարեկան գնահատումը ոչ համակարգային է քոլեցներում: Հատուկ ուշադրություն է պահանջվում հետազոտական բաղադրիչների և ծառայությունների ճիշտ բաշխման համար: Ակադեմիական դեկաններ և դասախոսական կազմը և Սենատի անդամները նշել են, որ համալսարանի հաջող ընդլայնումը և բակալավրական ծրագրի աճը կախված կլինի ընթացիկ ծանրաբեռնվածության նախնական հստակեցումից և հարթեցումից: Թիմը առաջարկում է ՀԱՀ-ին բարձրացնել դասախոսների ծանրաբեռնվածության համակարգվածությունը և թափանցիկությունը՝ ներառյալ ծառայությունը, հաշվի առնելով համալսարանի աճը և հետազոտական նկրտումները(CFR 3.2):

### Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ՀԱՀ-ում բակալավրական ծրագրի ամբողջականությունը բարձր է: Համալսարան հավատարիմ է ուժեղ ակադեմիական առաքելությանը՝ ուսանողներին դասավանդման խիստ փորձառությամբ, ուսանողների աջակցության ուժեղ ցանց և հավակնութ նպատակներ ապագա կարիերայի և ասպիրանտուրայի համար ապահովելու համար: Այս խառություն մասին վկայում են շոշափելի արդյունքները, ներառյալ մեծ թվով ուսանողները, ովքեր արագորեն պաշտոններ են գտնում ավարտելուց հետո, զգալի հարգանքը, որը ՀԱՀ-ը ունի ողջ երկրում, և աճող ներդրումային հետաքրքրությունը համալսարանի նկատմամբ: Թիմի եզրակացությամբ հաստատությունը տրամադրել է բավարար ապացույցներ՝ բարձր գնահատված և ճշգրիտ բակալավրական ծրագրի ցույց տալու համար:

### - Թեևս երկրորդ Ուսումնական ծրագրի ստուգում

Հավատարմագրման վերահաստատման համար Թեմատիկ ուղուն անդրադառնալու առաջարկը 022 թվականի հունվարի առաջարկում ՀԱՀ-ը նշել է, որ խորը ուսումնասիրության համար երկու թեմաներեն ընտրվել «արտացոլելու թե՛ համալսարանի ուժեղ կողմերը, թե՛ ՀԱՀ-ի ու Հայաստանի զարգացման ներկա պահը, թե՛ որոշ

մարտահրավերներ, որոնց պետք է անդրադառնա համալսարանը՝ շարունակելով կատարել իր առաքելությունը և բավարարել բարձրագույն կրթության պահանջները 21-րդ դարում» (պ. 1): Այս պատճառներով ուսումնական ծրագրերի վերանայման վերլուծությունը և գործընթացի շուրջ մտորումները ժամանակին և տեղին են: Ուսումնական ծրագրի վերանայումը, ներառյալ ուսանողների տարեկան գնահատման գործընթացը, ճանաչվել են որպես ՀԱՀ հավատարմագրման նախորդ ստուգատեսի ինստիտուցիոնալ ուժ: Բակալավրական կրթության զգալի աճով և արտաքին ազդեցություններով, ինչպիսին է համաշխարհային համաճարակը, ժամանակն է, որ ՀԱՀ-ը վերանայի և գործընթացները, և՝ ծրագրերի վերանայման և գնահատման արդյունքները, որանց ինտեգրումը համալսարանական այլ կարևոր գործընթացներում ինչպիսիք են պլանավորումը և բյուջետավորումը: Ուսումնական ծրագրի վերանայման աշխատանքային խումբը կազմվել է 2022 թվականի աշնանը: Այն մշակել է մի շարք հրատապ հարցեր, որոնք կօգնեն վերլուծել ՀԱՀ-ում ծրագրի վերանայման գործընթացը և արդյունքները:

ՀԱՀ-ում ուսումնական ծրագրերի վերանայման համար մշակված գործընթացը հասուն է և ուժեղ: Սա ամրագրված է Ուսումնական ծրագրի վերանայման ձեռնարկում դասախոսական կազմի Մենատի քաղաքականությունը, որը 2012 թվականի սկզբից ի վեր վերանայվել է երկու անգամ և այժմ, ընթացիկ հետազոտության և վերլուծության արդյունքում վերանայման և ճշգրտման փուլում է: Ուղեցույցը նախատեսում է ինքնուսուցում ծրագրի մի մասում. Վերանայման հանձնաժողովը, որը ներառում է ՀԱՀ-ի այլ ծրագրերի դասախոսներ, ինչպես նաև ՀԱՀ-ից դուրս գնահատողներ; և եզրափակիչ հանդիպում համալսարանի դեկանարության հետ, որին կհաջորդի առաջնահերթ գործողությունների իրականացման փոխհամաձայնեցված ծրագիրը, որը պետք է ձեռնարկվի վերանայման արդյունքների հիման վրա: Ուղեցույցները շեշտում են, որ Վերանայման գործընթացը պետք է հիմնված լինի տվյալների և փաստերի, ուսանողների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման, շահագրգիռ կողմերի ներդրման և արտաքին վերանայողների կողմից արձագանքի հիման վրա:

Ինստիտուցիոնալ հետազոտությունների և գնահատման գրասենյակը (OIRA) աջակցում է իրականացվող վերանայման ծրագրերին՝ տրամադրելով մի շարք տվյալներ՝ ինքնուրուսումնասիրման և արտաքին ստուգողների կողմից օգտագործելու համար: OIRA Կայքը տրամադրում է ռեսուրսներ դասախոսների համար պարբերաբար վերանայվող ծրագրերի վերաբերյալ, ներառյալ հղումը դեպի վերը նշված ուսումնական ծրագրերի վերանայման ուղեցույցները, որոնք ուրվագծում են ինքնուրույն ուսումնասիրություն պահանջվող տարրերը: OIRA-ի վերկայքում նաև հասանելի են նմուշներ ծրագրի դասախոսների համար՝ իրենց տարեկան գնահատման պլանների (SLAPs) և

զեկույցների (SLARs) նախապատրաստման ժամանակ օգտագործման համար, ինչպես նաև հղումը, որտեղ կարելի կրնկրես տվյալների հարցում կատարել: Գնահատման ուղեցույցը հասանելի է նաև կայքում: OIRA-ի անձնակազմը օգնում է դասախոսներին՝ անկախ հետազոտությունների պատրաստման ժամանակ օգտագործված տվյալների մեջնաբանման և վերլուծության հարցում: Մինչ անձնակազմն համալրվել է մի քանի վերլուծաբաններով բակալավրական ծրագրերի ավելացմանը զուգահեռ, վերջին թափուր աշխատատեղերը հանգեցրել են ծրագրերի վերանայմանը նման աջակցության տրամադրման հետաձգմանը, ինչպես նշված է ինստիտուցիոնալ զեկույցում: <ԱՀ-ն այս հաստիքների համարման և ընթացիկ տարվա տվյալների տրամադրման գործընթացում է:

<ԱՀ-ի բոլոր մագիստրոսական ծրագրերն անցել են առնվազն մեկ վերանայում, որոնցից շատերն երեք կամ ավելի վերանայումներ հինգից վեց տարի ընդմիջումներով: Բակալավրիատի մակադակում 2018թ.-2019թ. մինչ այօր ավարտվել է երեք աստիճանի ծրագրերի և Ընդհանուր կրթության ուսումնական ծրագրի վերանայման գործընթացը: <ԱՀ-ում ուսումնական ծրագրերի վերանայման գործընթացը կարծես թե աշխատում է այնպես, որ աջակցում է կրթական արդյունավետությանը և առաջ է մղում համալսարանի առաքելությունը՝ ապահովելով որ իր աստիճանով ծրագրերը շարունակեն բավարարել սոցիալական և տարածաշրջանային կարիքները: Ծրագրի պարբերական վերանայման ապացույցների և տվյալների կարևոր աղբյուրը հիմնված է ուսանողների յուրաքանչյուր աստիճանի ուսումնառության արդյունքների տարեկան գնահատման վրա: Այսուղև, ավելի քիչ համապատասխանություն կա աստիճանի ծրագրերի և ժամանակի միջև: Միայն մեկ աստիճանի ծրագիր է պարբերաբար անցկացնում տարեկան գնահատումներ. առնվազն մեկ ծրագիր դեռ չի մասնակցում է տարեկան գործընթացին: Ուսումնական ծրագրի վերանայման աշխատանքային խմբի կողմից բացահայտված խնդիրները՝ ըստ շահագրգիռ կողմի տրամադրած տվյալների, ներառում են համաձայնեցված գործողությունների չհամակարգված հետևողականություն, ուսանողի նվազագույն մասնակցությունը ուսանողների ուսումնառության գնահատման ժամանակ և վերանայման գործընթաց ծանրաբեռնվածության գնահատմանը: Աշխատանքային խմբի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում տրվեցին մի քանի նշանակալի խորհուրդներ՝ ուղղված գնահատման և ստուգման գործընթացների բարեկավմանը և դրանք ավելի լավ «ներդաշնակեցնելուն» համալսարանի յա գործընթացներին, ինչպիսիք են բյուջեի մշակումը և ռազմավարական պլանավորումը: Ուղեցույցում փոփոխություններ են մշակվել և ներկայացվել ուսումնական պլանի հանձնաժողովի քննարկմանը:

Մագիստրոսական ծրագրերի դեկանական հետ հարցագրույցների ժամանակ նրանք նշել են վերջին մի քանի տարիների ընթացքում մագիստրատուրայի դիմորդների զգալի նվազում համալսարանի բացման ժամանակի համեմատությամբ: Առաջարկվող

միջոցառումները ներառում էին 1) մագիստրոսական ծրագրի կառուցվածքի վերանայում և անհրաժեշտության դեպքում դրա կրճատում ուսանողների կարիքներին ու նախասիրություններին ընդառաջ, 2) ցերեկային պարապմունքներ առաջարկ՝ աշխատող մասնագետներին ներգրավելու համար, 3) ամառային դասընթացների առաջարկ՝ ուսանողներին օգնելու ժամանակին ավարտելու համար, 4) ճկուն պայմանների ստեղծում առցանց և հիբրիդային դասընթացներով, 5) լրիվ դրույքով դասախոսների ընդունում ժամանակավոր հիմունքներով դասախոսների փոխարեն, և 6) ընդլայնելով հավաքագրման ջանքերը ներառում բարեկավելով ֆինանսական աջակցությունը և ծառայությունները, և դրույմ բարձր որակավորում ունեցող միջազգային ուսանողների ներգրավելու համար: Բացի ուսումնական ծրագրի վերանայումից, ՀԱՀ-ը մշակել է տարեկան ուսումնական աջակցության բաժինների գնահատման ուղեցույցներ, ինչպիսիք են գրադարանը, ընդունելության գրասենյակը, Ինստիտուցիոնալ հետազոտությունների բաժինը և Գրանցավարի գրասենյակ: Ուղեցույցները հասանելի են OIRA-ի կայքում: Նրանք խրախուսում են այս բաժինները ներկայացնել առաքելության ձևակեպումները և նպատակները և խրախուսել բաժնի մեկից երեք առաջադրանքների գնահատումը ամեն տարի: Ուղեցույցները ներառում են ռեսուրսներ՝ օգնելու բաժիններին իրենց գնահատման աշխատանքների ընթացքում. բաժնի առաքելությունները համալսարանի առաքելության համապատասխանեցնելու աշխատաթերթ և գնահատման պլանի և հաշվետվության ձևանմուշներ: Ներառվում է նաև տարեկան գնահատման գործընթացի ժամանակացույցը: Ուսումնական աջակցության բաժինների գնահատման ՀԱՀ-ի նպատակը կարևոր է, իսկ ուղեցույցները օգտակար միջոցներ են տրամադրում: Սակայն մինչ այժմ նման գնահատումները հիմնականում չեն իրականացվել, և դա ընդունվել է ինստիտուցիոնալ գեկույցում: ՀԱՀ-ի համար կարևոր կլինի բացահայտել աջակցության բաժնի գնահատմանը խոչընդոտող հանգամանքները և գտնել ուղիներ՝ այն կայուն դարձնելու համար:

Թիմը բարձր է գնահատում ՀԱՀ-ի հանձնառությունը՝ ապահովելու իր առաքելության իրականացումը ծրագրի համակարգված վերանայման և գնահատման, ինչպես նաև այդ գործընթացների խորը փաստերի վրա հիմնված վերլուծության միջոցով՝ որպես հավատարմագրման վերհաստատման գործընթացի մաս: ՀԱՀ-ին խրախուսվում է շարունակել իր աշխատանքը ժամանակի ընթացքում համալսարանում ծրագրերի վերանայման և գնահատման համակարգվածության հասնելու համար և դրանք ավելի լիարժեք ներդաշնակեցնել բյուջեի բաշխման, ռազմավարական պլանավորման և աշխատուժի պլանավորման հետ:

## **III. Մաս 9. Վերլուծություն և բարեկավման պլաններ**

Գնահատող թիմը բարձր է գնահատում՝ ՀԱՀ համայնքը՝ վերանայման ժամանակահատվածում առաքելությանը և Հայաստանի և տարածաշրջանի ուսանողների կրթությանը հավատարիմ մնալու համար և նրանց դիմակայունության համար՝ հատկապես տեղական անհանգիստ պայմաններում և զորայ մարտահրավերների ֆոնին։ Թիմը գնահատում է լավ կազմակերպված մուտքը ինքնուրույն ուսումնասիրման գեկույցին, ուղեկցող փաստաթղթերին, թիմի արագ ադապտացմանը հարկադրված առանց այցելության, ինչպես նաև լրացույցից ապացույցների տրամադրումը։ Թիմի անդամները ուրախությամբ նշեցին, որ բոլոր մասնակիցները (դասախոսական կազմը, ուսանողները, անձնակազմը և դեկավարները) գոհ էին դրական մընուրտից, ամուր բարոյական ոգուց, կոլեգիալությունից, ցուցաբերվող աջակցությունից և առաքելությանն ուղղված ինստիտուցիոնալ ջանքերից՝ չնայած վերջին երկու տարիների անկայունությանը։ Գովելի է ՀԱՀ նոր շենքի հատակագծերում հումանիտար գիտությունների տարածքի ընդլայնման հանձնառությունը։ Այս նախաձեռնությունը՝ ուղղված ուսանողների բարգացիության զարգացմանն և համայնքային մասնակցությանը, աչքի է ընկնում հատկապես այն ժամանակ, երբ շատ, ավելի լավ ռեսուրսներ ունեցող, բարձրագույն ուսումնական հաստատությունները նվազեցնում են հումանիտար գիտությունների վրա շեշտադրումը։

Համալսարանն ունի կայուն պլանավորման գործընթացներ, կայուն ֆինանսական ռեսուրսներ և հուսայի կառույցներ, որոնք համահունչ են նրա առաքելությանը և հետևաբար ֆինանսապես կենսունակ են։ ՀԱՀ-ն իինզ անգամ ավելացրել է իր նվիրատվության ֆոնդը՝ դրամահավաքի լայնածավալ արշավների, քուշների անվանման, կրթաթոշակների և ֆինանսական օգնություն չափավոր ավելացման միջոցով։ ՀԱՀ-ի հիմնական նպատակները իրականացվել են նախորդ հաշվետու ժամանակահատվածում։ Մի քանի հարցագրույցներում նշվել է, որ ՀԱՀ-ը Հայաստանում «Ընտրության համալսարանն» է։ Ընդելությունը կազմում է 50%, իսկ ուսանողների ընդունելության մակարդակը գերազանցում է 88%-ը, ինչը վերը նշվածի տպավորիչ հաստատումն է։ ՀԱՀ շրնդիատվող ներդրումները հայ հասարակությանը և Հայաստանի երիտասարդ ժողովրդավարության մեջ, ինչպես նաև այդ ազդեցությունը շարունակաբար ուժեղացնելուն միտված մտածված պլանավորումը արժանի են հիացմունքի և գովասանքի։

Քանի որ ՀԱՀ-ն սկսում է իր նոր ռազմավարությունը, որը ներառում է համալսարանի զգալի աճ և ընդլայնում, ուսանողների ընդունելության և մարդկային ռեսուրսների (դասախոսական կազմի և աշխատակիցների) աճին գուգընթաց նոր շենքեր ձեռք բերում, բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերը ավելացում և համալսարանի գիտահետազոտական գործունեության ուժեղացում, թիմն առաջարկում է ներառական գործընթաց։ Կներգրավվեն բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ Դիլիջանի

համալսարանական քաղաքի անդամները՝ օպտիմալ արդյունքներ ապահովելու համար: Ցանկալի աճի և ընդլայնման պլան խոստումնալից է, և պայմանառոված է ներգրավված շահագրգիռ կողմերի աջակցությամբ (դասախոսական կազմ, ուսանողներ, անձնակազմ, դեկանալիքներ): Սա մեզ թույլ կտա արդյունավետորեն իրականացնել նոր առաջնահերթություններ և հասնել իր առարկության նպատակներին: Թիմը նշեց, որ ՀԱՀ-ը հավակնութ, բայց իրազործելի՝ ավելին հետազոտական համալսարան դառնալու, ծրագիր ունի: Սա ներառում է 55 միջին դոկտոր արժողությամբ հետազոտական և ուսումնական կենտրոնի կառուցումը, ինչի համար արդեն իսկ ապահովված է 29 մն դոկտոր և անշարժ գույքի գնումը: Զարգացման բաժինը տպագրիչ աշխատանք է կատարել և շարունակում է իրականացնել մի շաբաթ միջոցառումներ, հատկապես ամբողջ ԱՄՆ-ում: Կազմակերպչական փոփոխության և այն դինամիկ համատեքստում, որում գործում է ՀԱՀ-ը, Շահագրգիռ կողմերը նշել են թիմի կողմից նշված բարեկավման հնարավորություններ՝

- Մտածել ուսումնական ծրագրերի հանձնաժողովը ուսումնամեթոդական խորհրդից առանձնացնելու մասին՝ տարբեր քոլեգների և առարկաների դասախոսների ավելի լայն ներկայացուցություն ներառելու համար:

- Ուսումնասիրել ուղիներ՝ բարեկավելու համալսարանական քաղաքի օգտագործումը՝ ներգրավելով լրացուցիչ մագիստրոսական ծրագրեր և հաստատությունը դարձնելով գրավիչ տարածք ուսանողների փորձի համար:

- Գնահատել հետազոտական Էկոհամակարգերի և ենթակառուցվածքների զարգացման ռազմավարությունները, որոնք կարող են ներառել ժամանակավոր պաշտոնավարման քաղաքականության վերլուծությունը, ավելացնելով լրիվ դրույքով դասախոսների կազմը, մշակելով դոկտորական ծրագրեր և գտնելով լրացուցիչ ֆինանսավորում և աջակցություն դասախոսների հետազոտությունների համար:

### **ԲԱԺԻՆ III – ԱՅԼ ԹԵՄԱՆԵՐ (օրինակ՝ Էական փոփոխություններ):**

-Առկա չեն

### **ԲԱԺԻՆ IV – ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՈՎԱՍԱՆՔՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀԱՀ-ն առաջատարն է տարածաշրջանում իր ամերիկյան բարձրագույն կրթության ուսումնական պլանով, քաղաքականությամբ և տեսչականով երկրի նոր աշխատուժի համար: Թիմը բարձր է գնահատել թափանցիկ շփումը և խոհուն արձագանքները հոգաբարձուների խորհրդի, տնօրինության, դասախոսական կազմի և աշխատակազմի, ինչպես նաև նոր նախագահի հետ հարցրագրույցներից:

Հաշվետվության ընթացքում թիմը գտավ, որ ՀԱՀ-ն ուշագրավ հաջողություն է գրանցել ուսանողների մասնակցությանը և ձեռքբերումների ոլորտում, որոնք ցույց են տալիս նրա որակյալ կրթության հասնելու հանձնառությունը: Գործելով դժվարին հանգամանքներում՝ ՀԱՀ-ը հմտորեն հաղթահարեց խոչընդոտները՝ հարմարեցնելով իր առաջարկները ընթացիկ կարիքներին: Խմբի եզրակացությունները արտացոլում են վստահություն ՀԱՀ-ի հաջողությունները պահպանելու ունակության նկատմամբ և իր համայնքում և ամրող տարածաշրջանում նշանակալից ներդրումների շարունակելիությանը:

**Երախտազիտություն. Թիմը շնորհակալություն է հայտնում ՀԱՀ-ին՝**

1. Համապարփակ, վերլուծողական և հեռանկարային գեկույց, որը ցույց տվեց ինքնազնահատման և վերլուծման ներառական և մտածված գործընթաց:

2. Բակալավրական ծրագրի հաջող ընդլայնում, որը ներառում է մեծ քանակությամբ դիմորդներով ութ բակալավրական աստիճան, Ընդհանուր կրթության ծրագիր և ուսանողների աջակցության մի շարք ծառայություններ:

3. Խորհրդի լայն կոնսենսուս ուժեղ բարոյական ոգու, կոլեգիալության, բոլոր մասնակիցների ակտիվ մասնակցության վերաբերյալ (դասախոսական կազմ, ուսանողներ, անձնակազմ և դեկավարներ), և հատկապես ուսանողների՝ իրենց տարբեր համայնքային ուղղվածությամբ ճգնաժամերի ընթացքում և չնայած դրանց (COVID-19, պատերազմներ):

4. Դասախոսական կազմի, տնօրինության և անձնակազմի բացառիկ նվիրվածությունը թե՛ հաստատությանը, թե՛ դրա հանրային դերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուսանողներին աջակցությանը:

5. Մշակույթ, որը կենտրոնացած է կանոնավոր վերանայման և ծրագրի գնահատման շարունակական բարելավման վրա՝ ապահովելու ճշգրտություն և հետևողականություն.

6. Քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապահովելու էթիկայի և անաշառության համապատասխանությունն իր գործունեության բ ոլոր ոլորտնեւում (Գործունեության ծրագրերի քաղաքականություն, Ազդարարության քաղաքականություն, Ուսանողների վարքագծի կանոններ և այլն) և սահմանել չափանիշներ տեղական այլ համալսարանների համար (օրինակ՝ Ազդարարման քաղաքականություն):

7. Հոգաբարձուների խորհրդի հետևողական աջակցություն և նվիրվածություն ՀԱՀ առաքելությանը; ՀԱՀ-ի առջեւ ծառացած հնարավորությունների և մարտահրավերների մասին նրանց խորը գիտելիքները. և նրանց տեսլականը և նպատակները համալսարանի և նրա ուսանողների, դասախոսական կազմի և անձնակազմի մոտ և հեռավոր ապագայի համար:

8. Վերջին տասնամյակի ֆինանսական կայունության վրա կենտրոնացումը մի քանի տարվա հավասարակշռված բյուջեներով վերահսկելով ծախսերը, հաշվի առնելով

արժույթի տատանումները և ավելացնելով եկամուտների աղբյուրները, ինչպես նաև նվիրատվության ֆոնդի հնգապատկումը:

*Առաջարկություններ. Թիմը <ԱՀ-ին ստացարկում է՝*

1. <Իմնելով բազմազանության, հավասարության և ներառման (DEI) հայտարարված պարտավորության վրա՝ շարունակել ջանքերը՝ ա) կատարելագործելու և ընդունելու DEI-ի պաշտոնական սահմանումները, որոնք ներառում են տարբեր հեռանկարներ և մշակութային զգայունություն ուսումնական ծրագրում և հետազոտությունում, բ) նշանակել DEI-ի աշխատողին, և զ) մշակել վերապատրաստման մոդուլ(ներ), որոնք կընդգրկեն ոտնձգությունները, խտրականությունը, անհարգալից վարքագիծը և դասախոսական կազմի, անձնակազմի և ուսանողների գեկույցների ընթացակարգերը: (CFR 1.4)

2. Թիմը <ԱՀ-ին խորհուրդ է տալիս նպաստել վերջին և սպասվող ընդունելության աճին՝ առաջնահերթություն տալով <ԱՀ-ի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացահայտմանը և նրանց հետ փոխգործակցությանը՝ առանց գերազանցելու կարողությունները, միաժամանակ հավասարակշռելով դասախոսների, անձնակազմի, տարածության և շենքերի կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունները. (CFR 3.5, 4.7)

3. Ապահովել հստակ և հետևողական փոխգործակցություն շահագրգիռ կողմերի հետ, հատկապես աճի նպատակների, մարտահրավերների և մեղմացման ռազմավարությունների շուրջ առաջիկա հինգ տարիների ընթացքում: (CFR 3.7, 4.6)

4. Բարեկավել դասախոսների ծանրաբեռնվածության համակարգվածությունը և թափանցիկությունը, ներառյալ պատասխանատվությունը, համապատասխանելու համալսարանի աճին և հետազոտական ձգտումներին: (CFR 3.2)

5. Շարունակող ինստիտուցիոնալ ճկունությունը ամրապնդումը՝ արտակարգ իրավիճակների ծրագրերի ստեղծման և լայնորեն տարածման միջոցով ճգնաժամի պայմաններում ուսումնականության համար: (CFR 1.7, 2.1, 3.1, 3.6, 3.7):

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Զեկույցը ներառում է հետևյալ հավելվածները՝

A. Դաշնային համապատասխանության ձևեր

### 1. Կրեդիտային ժամի և ծրագրի տևողության վերանյման ձև

|  |   |
|--|---|
| Վերանյման նյութը   | Հարցեր/մեկնաբանություններ (անհրաժեշտության դեպքում նշեք եզրակացությունները և առաջարկությունները մեկնաբանություններ բաժնում)   |
| Կրեդիտային ժամերի քաղաքականություն                           | <p>Արդյո՞ք այս քաղաքականությունը դյուրամատչելի է <input checked="" type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ</p> <p>Եթե այո, որտե՞ղ է տեղակայված այս քաղաքականությունը:</p> <p>Մեկնաբանություններ՝</p> <p><b>Կրեդիտային ժամերի քաղաքականություն,</b><br/> <a href="https://policies.aua.am/policy/34">https://policies.aua.am/policy/34</a> <a href="https://policies.aua.am/">https://policies.aua.am/</a></p>   |
| Գործընթաց(ներ)/<br>կրեդիտային ժամերի<br>պարբերական վերանյում | <p>Արդյո՞ք հաստատությունն ունի կրեդիտային ժամերի նշանակման պարբերական վերանյման գործընթաց՝ ապահովելու դրանց ճշգրտությունն ու հուսալիությունը (օրինակ՝ ծրագրի վերանյման, նոր դաշնոթացի հաստատման գործընթացի, պարբերական առողջի միջոցով)՝ <input checked="" type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ</p> <p>Եթե այո, ապա հետևո՞ւմ է արդյոք հաստատությունը այս ընթացակարգին՝ <input checked="" type="checkbox"/> ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ</p> <p>Մեկնաբանություններ՝</p> <p>Համալսարանի ուսումնական օրացույցը և զանգի ժամանակացույցը նախատեսված են ապահովելու, որ ստանդարտ դասընթացի բյուները, ինչպես նաև երեկոյան դասընթացները համապատասխանեն կրեդիտային ժամի քաղաքականությանը պահանջներին: Օրացույցն առաջարկվում է գրանցավարի կողմից, վերանյվում է դասախոսական խորհրդի կողմից և հաստատվում է պրոռեկտորի կողմից:</p> <p>Դասախոսական խորհրդի Ուսումնական պյանի հանձնաժողովը հաստատում է բոլոր նոր դասընթացները և ստուգում է դրանք՝ համոզվելու համար, որ նրանք համապատասխանում են բոլոր կանոններին, ներառյալ կրեդիտային ժամը:</p> <p>Ծրագրերի դեկավարները վերանյում և հաստատում են բոլոր ուսումնական ծրագրերը քաղաքականությանը համապատասխանելու համար, ներառյալ կրեդիտային ժամը: OIRA-ն արխիվացնում է բոլոր ուսումնական ծրագրերը:</p> <p>OIRA-ն անցկացնում է ուսումնական պյանների վերանյում պատահականության սկզբունքով, ի թիվս այլոց, լսարանում հանդիպումների համար:</p> <p>Ուսումնական ծրագրի վերանյման գործընթացը ներառում է ծրագրի բոլոր գործողությունների վերանյում քաղաքականությանը համապատասխանելու համար, ներառյալ կրեդիտային ժամը</p> |

|  |  |
|--|--|
